

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետության անվտանգության հիմնական խնդիրներից է լինելու Մեծամորի ԱԷԿ նոր էներգաբլոկի կառուցումը: Մոտ \$5 մլրդ արժողությամբ էներգաբլոկը ՀՀ պատմության մեջ ամենաթանկ եւ կարելուր տնտեսական ծրագիրն է լինելու, որի նշանակությունը պետք է դիտարկել ոչ միայն տնտեսական, այլ նաեւ քաղաքական եզրերով:

Թեեւ էներգետիկան կարելուրագույն տեղ է զբաղեցնում համաշխարհային տնտեսական եւ քաղաքական հարաբերություններում, մինչ օրս չկա «էներգետիկ անվտանգություն» եզրի միասնական սահմանում՝ ի տարբերություն, ասենք, ազգային, պարենային կամ տեղեկատվական անվտանգության: Արեւմուտքում դրա՝ որպես շատ թե քիչ ընդհանրական սահմանումը տրված է ԵՄ էներգետիկային առնչվող փաստաթղթերում, ըստ որոնց՝ էներգետիկ անվտանգությունն ունի 3 հիմնական բաղկացուցիչ. անվտանգ մատակարարում, գին, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Ակնհայտ է, որ երեք բաղկացուցիչների համադրությունը կարող է ստեղծել էներգետիկ անվտանգության բավական կայուն համակարգ: Բայց կարո՞ղ է արդյոք էներգետիկ անվտանգության նկատմամբ նման մոտեցումը հիմք հանդիսանալ ՀՀ էներգետիկ քաղաքականության մշակման եւ իրականացման համար: Տեսականորեն՝ այո, իսկ գործնականում՝ ոչ: Խնդիրն այն է, որ էներգետիկ անվտանգության ապահովման համար կարելուր նշանակություն ունի տարածաշրջանային միջավայրը: Եթե Եվրոպայի կամ այլ աշխարհամասի համար տարածաշրջանային փոխգործակցությունն էներգետիկ ոլորտում բնական է եւ հաստատուն, ապա Հայաստանի համար իրավիճակն ընդհանուր առմամբ հակառակն է:

Հայաստանի էներգետիկ անվտանգության ներկա իրավիճակը ստեղծված է ոչ թե տարածաշրջանային փոխգործակցության, այլ տարածաշրջանային հակամարտությունների հիման վրա: Ադրբեջանի եւ

Թուրքիայի կողմից ՀՀ շրջափակումը բերել է մեր էներգետիկ քաղաքականության այնպիսի իրավիճակի, երբ ՀՀ էներգետիկ հեռանկարները մատնանշելիս առաջնային ուշադրություն պետք է դարձնենք ոչ թե հնարավորություններին, այլ ռիսկերին. վերջիններս առաջիններից շատ են: Եվ այս տեսանկյունից մեզ համար էներգետիկ անվտանգության ամենակարեւոր բաղադրիչն էներգակիրների կայուն եւ անխափան մատակարարումն է Հայաստան: Հենց այս իրողությունն է, որ պետք է հիմք ընդունվի ՀՀ էներգետիկ զարգացման կայունության ապահովման համար: Միաժամանակ, հենց այս նույն իրողությունն է, որ պետք է ձեւավորի միջուկային էներգետիկայի զարգացման անհրաժեշտությունը:

Մատակարարման մարտահրավերները

ՀՀ էներգետիկ անվտանգության հիմնական բաղադրիչը բնական գազն է, որն օգտագործվում է թե՛ էլեկտրաէներգիայի արտադրության համար, թե՛ արդյունաբերության մեջ եւ թե՛ քաղաքացիների կողմից սպառման նպատակներով: Բնական գազի ներկրումը Հայաստան իրականացվում է երկու ճանապարհով, որոնց կայուն գործունեությունը վտանգված է տարածաշրջանային եւ միջազգային հնարավոր զարգացումներով:

Յյուսիս–Հարավ գազատար

Ռուսաստանից Վրաստանի տարածքով ձգվող գազատարը, որը կառուցվել է դեռեւս խորհրդային ժամանակներում, վերջին 20 տարիների ընթացքում լրջորեն չի արդիականացվել: Անցած 5 տարիների ընթացքում վրացական կառավարությունը, հիմնականում ամերիկյան «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում ստացված միջոցների հաշվին, այստեղ որոշակի վերականգնողական աշխատանքներ է իրականացրել, սակայն դրանք կրել են կոսմետիկ բնույթ եւ վերացրել են խողովակաշարի ամենավտանգված հատվածների թերությունները:

Վրացական կողմը բազմիցս հայտարարել է, որ գազատարի լիարժեք արդիականացումը պահանջում է ԱՄՆ մի քանի տասնյակ միլիոն դոլարի ներդրումներ, որոնք վրացական կառավարությունը չի կարող ծախսել: Միեւնույն ժամանակ, գազատարի կայուն գործունեությամբ հետաքրքրված երկու կողմերը՝ ՀՀ-ն եւ ՌԴ-ն, մի շարք պատճառներով նման ներդրումներ չեն կարող իրականացնել: Հիմնական պատճառն այն է, որ

գազատարը վրացական պետության սեփականությունն է, եւ արտաքին ներդրումների իրականացման համար անհրաժեշտ է գազատարի գոնե չափավոր մասնավորեցում: Սակայն այս դեպքում ակնհայտ է, որ վրացական կողմը չի վաճառի գազատարը Ռուսաստանին, իսկ հայկական հիմնական էներգետիկ ընկերությունը՝ «ՀայՌուսգազարդը», անգամ ցանկության դեպքում չի կարող գնել գազատարի չափաբաժինը, քանի որ չի տիրապետում անհրաժեշտ ֆինանսական միջոցների: Ակնհայտ է, որ ռուսական «Գազպրոմը» զուտ տեսականորեն կարող է գազատարին տիրանալու փորձ կատարել, եթե վրացական կառավարությունը գազատարի բաժնետոմսերը վաճառի միջազգային բորսային հարթակներում: Բայց սա միայն հնարավորություն է, որը կապված է այն բանի հետ, թե արդյոք Վրաստանը կօգտագործի բորսային հարթակները գազատարի վաճառքի համար:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Ադրբեջանի պետական նավթային ընկերության ղեկավարությունը բազմիցս հայտարարել է գազատարը գնելու ցանկության մասին, սակայն վրացական իշխանությունների հետ հայկական կողմի բանակցությունների արդյունքում գազատարի վաճառքն ադրբեջանական կողմին կասեցվել է: Բայց սա կարելի է համարել միայն ժամանակավոր հաջողություն, որը կարող է խարխուլվել երկու հիմնական պատճառով: Առաջին՝ Վրաստանը քաղաքական վերափոխումների ակտիվ շրջան է ապրում. դրա եւ նախագահի պաշտոնից Մ.Սահակաշվիլու հեռանալու արդյունքում իշխանության կարող են գալ նոր ուժեր, որոնց տարածաշրջանային ռեալ քաղաքականության ուղղությունները կանխատեսել կարելի է միայն պայմանականորեն: Հայտնի է, թե ինչ դիրքորոշում կունենա վրացական պետական գործիչների հաջորդ սերունդն Ադրբեջանի եւ Հայաստանի հետ հարաբերությունների առնչությամբ: Երկրորդ՝ ներկայումս Ադրբեջանը Վրաստանի հիմնական տնտեսական եւ քաղաքական գործընկերն է, եւ այս գործընկերությունն ավելի է խորանալու՝ հաշվի առնելով այն, որ առաջիկա տարիներին Ադրբեջանը դառնալու է Արեւմուտք բնական գազի խոշոր արտահանող (տարեկան մոտ 25 մլրդ մ³), եւ արտահանման միակ ճանապարհն անցնելու է Վրաստանով: Վրաստանի տնտեսական կախվածությունն ադրբեջանական բնական գազի արտահանման ռենտայից եւ Վրաստանի համար հաստատված հատուկ ցածր գնից՝ խորանալու է, ինչը կարող է Բաքվին հնարավորություն տալ տիրանալու Հյուսիս–Հարավ գազատարին, ինչի արդյունքում Բաքուն Հայաստանի վրա ազդելու նոր լուրջ լծակ ձեռք կբերի:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ Հյուսիս–Հարավ գազատարի հետագա ճակատագիրը կանխատեսել հնարավոր չէ, եւ այս հանգամանքը բնական գազի ներմուծումը Հայաստան Վրաստանի տարածքով դարձնում է ռիսկային ու երկարաժամկետ կտրվածքով առնվազն անկայուն:

Իրան–Հայաստան գազատար

Իրան–Հայաստան գազատարն անկախությունից հետո ՀՀ-ի կողմից իրականացված ամենակարեւոր տնտեսական նախագիծն է, որը բնական գազի ներկրման իրական այլընտրանք է ստեղծել: Սակայն գազատարի կառուցման ժամանակ տարածաշրջանային իրադրությունն այլ էր, քան այսօր. չնայած մերթ ընդ մերթ ակտիվացող իրանա-ամերիկյան հակասություններին, երկու պետությունների միջեւ իրական ռազմական բախման մասին խոսակցությունները հիմնականում քարոզչական բնույթ էին կրում: Ներկայում իրավիճակն այլ է. ակնհայտ է, որ Իսրայելն ու Միացյալ Նահանգներն այսօր էլ ավելի են մոտենում Իրանի դեմ ռազմական գործողություն իրականացնելու որոշման ընդունմանը, ինչն ավելի իրատեսական կդառնա տարածաշրջանում Իրանի հիմնական դաշնակից Սիրիայի իշխանությունների հնարավոր տապալումից հետո:

Այստեղ հարկ է նշել մի կարեւոր հանգամանք: Ռազմական հարվածն Իրանին իրականացվելու է ոչ միայն միջուկային օբյեկտների, այլ նաեւ ռազմական ենթակառուցվածքի ուղղությամբ, որը սփռված է ողջ պետության տարածքով, այդ թվում՝ նաեւ Հայաստանին հարող: Իսկ Իրանի հնարավոր հակահարվածը կարող է հանգեցնել իսրայելա-ամերիկյան ուժերի կողմից Իրանի տնտեսական խոշոր ենթակառուցվածքների ոչնչացմանը: Խոսքն, առաջին հերթին, նավթագազահորերի եւ խողովակաշարերի մասին է, որոնք ապահովում են հումքի արդյունահանումն ու արտահանումը եւ կազմում են իրանական տնտեսության հիմքը: Հայաստանի համար, բացի բազմաթիվ այլ բացասական հետեւանքներից, նման սցենարի զարգացումը ենթադրում է Իրան–Հայաստան գազատարի գործունեության առնվազն կասեցում, ինչի արդյունքում ՀՀ-ն կարող է զրկվել բնական գազի ներկրման երկրորդ աղբյուրից:

Իհարկե, դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ կհամընկնեն Հյուսիս–Հարավ եւ Իրան–Հայաստան գազատարների գործունեության կասեցումները, բայց դրա (թեկուզեւ տեսական) հնարավորությունը կա:

Միջուկային էներգետիկայի անհրաժեշտությունը

Մեր համոզմամբ՝ հենց վերը նշված մարտահրավերներն են, որ պետք է դրվեն Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացման հիմքում: Մնացած բոլոր գործոնները՝ միջուկային էներգետիկայի զարգացման գինը, նոր էներգաբլոկի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի բարձր արժեքը եւ միջուկային կայանի ռիսկայնությունը, ունեն թեեւ կարելու, սակայն երկրորդային նշանակություն: Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության համակարգը ձեւավորվել է գոյատևում է եվրոպականից տարբերվող տարածաշրջանային իրավիճակում, որն էլ հենց ձեւավորում է այդ քաղաքականությունը:

Ակնհայտ է, որ նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը բավական երկար գործընթաց է: Տեսականորեն հնարավոր է, որ կայանի կառուցումը չստանա համապատասխան ֆինանսավորում, քանի որ ներդրումային ու տնտեսական առումով նախագիծը շահութաբեր չէ: Սակայն հաշվի առնելով բնական գազի ներկրման հետ կապված ռիսկայնությունը՝ միջուկային կայանի առկայությունը Հայաստանում անհրաժեշտ է պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխվել տարածաշրջանային իրադրությունը կամ՝ քանի դեռ ՀՀ-ն այլընտրանքային էներգետիկայի տեսակարար կշիռն ընդհանուր էներգետիկ համակարգում չի հասցրել պետության նվազագույն պահանջների բավարարման մակարդակին:

ՍԻՐԻԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ **Արաքս Փաշայան**

Սիրիայի ռազմաքաղաքական ներկա զարգացումների մեջ լրջագույն փոփոխություններ են գրանցվել: Նախկինում ընդդիմության արմատական թեւի ներկայացուցիչները, մասնավորապես՝ Սիրիայի Ազգային խորհուրդը, առաջ էին քաշում դրույթներ վարչակարգի դեմ խաղաղ պայքարի, արտաքին ռազմական միջամտության բացառման եւ լիբիական սցենարի անընդունելիության մասին: Նշվում էր, որ հակակառավարական պայքարը քաղաքական բնույթ ունի, միտված է Սիրիայի ժողովրդավարացմանը եւ չի կարող վնաս հասցնել սիրիական հասարակության միասնությանը՝ անկախ նրա անդամների էթնիկ եւ դավանական պատկանելությունից: Քիչ հավանական էր համարվում իշխանության գալու իսլամիստների հնարավորությունը:

Ներկա փուլում սիրիական գործընթացի մեջ էական շրջադարձեր են տեղի ունեցել: Գաղափարական պայքարը վերաճել է բացառապես զինված առճակատման՝ սուենիների եւ ալավիների միջեւ հակամարտության տպավորությամբ: Աննախադեպ չափերի են հասել բռնությունների ալիքը, քրեական հանցագործությունների ծավալը: Ընդդիմադիր դաշտում՝ քաղաքական թե ռազմական, ընդլայնվել է իսլամիստների ազդեցությունը, առավել ծանրակշիռ է դարձել ընդդիմության ռազմական թեւի նշանակությունը:

Իրողությունների այս համատեքստում միջազգային մեկուսացման եւ տարաբնույթ պատժամիջոցների ենթարկված Սիրիայի իշխանությունները շարունակում են հակազդեցություն ցույց տալ ապստամբներին՝ ակտիվորեն օգտագործելով նաեւ օդուժը: Թե՛ Զալեպուն եւ թե՛ Դամասկոսում մարտերը շատ հաճախ ընթանում են թաղամասերում, ինչը դժվարություն է ստեղծում ռազմական տեխնիկայի կիրառման տեսանկյունից:

Ապստամբներին հաջողվել է ազդեցություն ձեռք բերել եւ կաթվածահար անել երկրի առեւտրատնտեսական ամենախոշոր կենտրոնը՝ Զալեպ քաղաքը, այն վերածելով կառավարական զորքի հետ բախումների հարթակի: Ընդդիմության զինված թեւի՝ «Ազատ սիրիական բանակի» մեջ մեծ թիվ են կազմում արաբական եւ իսլամական տարբեր երկրներից հավաքագրված վարձկանները, որոնք շարունակում են զգալի կորուստներ կրել: Ամեն պարագայում, իշխանությունները կորցրել են ամբողջական

վերահսկողությունը թե՛ երկրի ներսում, թե՛ հատկապես սահմաններին, որտեղից ընդդիմադիրներն անարգել կերպով աջակցություն են ստանում:

Չնայած այն հանգամանքին, որ ալ-Ասադի վարչակարգը, կարծես, հեռանկար չունի, վերջինս շարունակում է մնալ սիրիական խճանկարի լրջագույն գործոնը եւ հակամարտության ամենաուժեղ կողմը: Սիրիական վարչակարգը շարունակում է աջակցություն ստանալ իր հիմնական դաշնակիցներից՝ Իրանից, Ռուսաստանից եւ Չինաստանից: Հատկանշական է, որ Քոֆի Անանին փոխարինած ՄԱԿ եւ ԱՊԼ հատուկ բանագնաց Լախդար Բրահիմին իր առաքելության ընթացքում դեռեւս չի բարձրացրել ալ-Ասադի հեռանալու հարցը:

Պետք է ասել, որ ընդդիմադիր դաշտում առկա մի շարք իրողություններ աշխատում են հոգուտ վարչակարգի. մասնավորապես՝ փոխհամաձայնության հասնելու դժվարությունները, որ գոյություն ունեն սիրիական բազմաշերտ ընդդիմության թե՛ ռազմական եւ թե՛ քաղաքական թեւերում, ինչպես նաեւ նրանց միջեւ: Որոշակի խնդիրներ կան նաեւ ընդդիմադիրներին սատարող միջազգային ուժերի շրջանում:

Սիրիական գործընթացին միջամտելու նպատակահարմարության մասին արեւմտյան մամուլում ժամանակ առ ժամանակ հայտնվում են հեղինակավոր փորձագետների տեսակետներ: Այս առումով, հետաքրքրություն է ներկայացնում ամերիկյան նշանավոր քաղաքագետ Հենրի Բիսինջերի՝ վերջերս «Վաշինգթոն փոսթում» հրապարակված հոդվածը: Դրանում հեղինակը նշում է, որ ԱՄՆ-ը Սիրիայի հարցում «պատին է դեմ առել»:

Հիշենք, որ դեռեւս 2011թ. հոկտեմբերին The Sunday Telegraph-ին տված հարցազրույցում Բաշար ալ-Ասադը զգուշացնում էր, որ Սիրիայում Արեւմուտքի միջամտությունը եւ երկիրը մասնատելու փորձերը երկրաշարժ կառաջացնեն ողջ Մերձավոր Արեւելքում՝ ի հայտ բերելով նորանոր «աֆղանստաններ»:

Սիրիայում սկսված բռնությունների ալիքը, որն ավելի է սաստկանում միջդավանական հակամարտության համատեքստում, արդեն իր ազդեցությունն է թողնում հարեւան երկրներում: Ասվածի ապացույցը լիբանանյան Տրիպոլիում տեղի ունեցած զինված բախումներն էին սոււննիների եւ ալավիների միջեւ:

Սիրիական ճգնաժամով պայմանավորված՝ սուր խնդիրներ են առաջացել Թուրքիայում, որտեղ ակտիվացել է քրդական գործոնը, ավելի ստույգ՝ Քրդական բանվորական կուսակցությունը, խաղաքարտ, որն Անկարայի դեմ լավագույնս օգտագործվում է Դամասկոսի կողմից: Բացի այդ, լարված եւ պայթյունավտանգ է իրավիճակը Սիրիային սահմանակից

Հաթայ նահանգում, որտեղ տեղակայված են սիրիացի փախստականների ճամբարներն ու սիրիական ընդդիմադիրների ռազմաբազաները: Հակասադական տրամադրվածություն ունեցող հազարավոր սուլենի արաբների ներկայությունը Թուրքիայում ոչ միայն քրեածին մթնոլորտ, այլևս լուրջ հակասություններ է ստեղծել սիրիական վարչակարգին աջակցող տեղի ալավի բնակչության հետ վերջիններիս հարաբերություններում:

Սիրիական ճգնաժամի ձգձուկն մտահոգիչ է նաև Սաուդյան Արաբիայի եւ Կատարի համար, որտեղ սիրիական հարցի հետ կապված խնդիրներ կան իշխանական վերնախավում: Որեւէ երաշխիք չկա, որ «արաբական գարունը» կշրջանցի արաբական միապետություններին, մինչդեռ ցանկացած անկայունություն այդ շրջանում կարող է էլ ավելի սրել առանց այդ էլ լարված հարաբերությունները սուլենիների եւ շիաների միջև:

Հընթացս, թե՛ միջազգային դիվանագիտական եւ թե՛ փորձագիտական շրջանակներում ժամանակ առ ժամանակ շարունակում են քննարկվել Սիրիայում իշխանափոխության տարաբնույթ սցենարներ: Վերջերս զանգվածային լրատվամիջոցներում տարածվեց ալ-Ասադի «փափուկ» հեռացման մասին հերթական պլանը: Ըստ այդմ՝ Սիրիայի խնդրում ներգրավված միջազգային ուժերը ստեղծել են «շփման խումբ»՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի, Իրանի, Սաուդյան Արաբիայի, Չինաստանի ու Եգիպտոսի մասնակցությամբ եւ զաղտնի բանակցում են սիրիական ճգնաժամի քաղաքական լուծման ծրագրի շուրջ: Այն նկատի է առնում իշխանության ժամանակավոր փոխանցումը զինվորականներին կամ մարտունակ ռազմական մի ուժի, որի մեջ պետք է մտնեն սիրիական բանակի եւ անվտանգության նախկին ղեկավարներ, ինչպես նաև զինվորականներ «Ազատ սիրիական բանակից»: Ծրագիրը երաշխավորում է ալ-Ասադի, նրա ընտանիքի եւ անմիջական շրջապատի անվտանգ հեռանալը երկրից: Ռուսաստանի փորձագետ Վ.Ախմեդովի կարծիքով՝ նշված ծրագրի մշակումը հնարավոր չէր դառնա, եթե Ռուսաստանն ու Իրանը համոզված չլինեին, որ այլևս չեն կարող օգնել ալ-Ասադին՝ իշխանությունը պահելու հարցում:

Ի՞նչ է սպասվում Սիրիային իշխանափոխությունից հետո: Ի՞նչ է լինելու ալավիների հետ: Ալ-Ասադի հեռանալը չի կարող լուծել հակասությունը հակամարտության հիմնական ուժերի՝ սուլենիների եւ ալավիների միջև, որոնց միջև անտազոնիզմը մի քանի տասնամյակի պատմություն ունի: Անկախ այն հանգամանքից՝ իշխանափոխություն կլինի, թե չէ, ալավիները շարունակելու են հակազդեցություն ցույց տալ: Իշխանությունը պահպա-

նելու ալ-Ասադի ջանքերն իրականում առավելապես պայմանավորված են ալավիական գործոնով: Պատահական չէ, որ որպես Սիրիայի հեռանկար քննարկվում է նաեւ սուննիների, քրդերի եւ ալավիների միջեւ երկրի հնարավոր բաժանման հարցը:

Իշխանափոխությունից հետո Սիրիայում հնարավոր քաղաքացիական պատերազմը, ըստ ամենայնի, դուրս կգա այդ երկրի սահմաններից՝ վերածվելով սուննի–շիա տարածաշրջանային հակամարտության: Անկայունությունը Սիրիայում կպահպանվի դեռ շատ երկար ժամանակ՝ անկախ իշխանափոխության հանգամանքից: Իսկ մինչ այդ, ընդդիմադիրներին սատարող արտաքին գլխավոր դերակատարները՝ ԱՄՆ ղեկավարությամբ, թերեւս զերծ մնալով ռազմական միջամտությունից, իրենց դաշնակիցների՝ Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի եւ Կատարի միջոցով կշարունակեն հյուծել ալ-Ասադին: Թե որքան կարող է դիմանալ ներկա վարչակարգը կամ թե ինչ պարագայում կհամաձայնի փոխանցել իշխանությունը՝ դժվար է ասել:

Սիրիական ճգնաժամը լրջագույն խնդիրներ է ստեղծել նաեւ տեղի հայ համայնքի համար: Եթե նախկինում ռազմական գործողությունները հեռու էին հայաբնակ վայրերից, ապա ներկայումս հակամարտության կիզակետ է դարձել Յալեպ քաղաքը՝ մտահոգիչ վիճակ ստեղծելով Սփյուռքի մայր գաղութի համար: Որոշակի մտահոգություն է ստեղծում նաեւ այն փաստը, որ Սիրիայի եւ Թուրքիայի սահմանին կան հայաշատ բնակավայրեր:

Սիրիահայերը սիրիական հասարակության մի բաղադրիչն են եւ, ինչպես երկրի մնացած քաղաքացիները, սպասում են իրավիճակի կայունացմանը: Սակայն տեւական անկայունությունը, անորոշ հեռանկարը, տնտեսական խնդիրները, քրեական տարրերի ակտիվացումը, կրոնականացվածության աճը եւ միջդավանական հակասությունների հարաճուն չափերն օրակարգային են դարձրել Սիրիայում հայերի հեռանկարի հարցը:

Կանխատեսումներն այս հարցում այնքան էլ լավատեսական չեն, եթե հաշվի առնենք, որ անկախ այն հանգամանքից՝ իրավիճակը Սիրիայում կկայունանա, թե ոչ, Մերձավոր Արեւելքը դարձել է անապահով եւ անհեռանկարային վայր քրիստոնյաների համար:

ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՐԱՆԸ Արտաշես Տեր-Հարությունյան

Օգոստոսի վերջին Իրանը հայտարարեց, թե իր զինված ուժերը մասնակցում են Սիրիայում ընթացող պատերազմին: «Մենք մասնակցում ենք [Սիրիայում ընթացող] ռազմական բոլոր տեսակի գործողությունների», օգոստոսի 27-ին իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Սահիբ ալ-Ամր» զորամիավորման հրամանատար, գեներալ Սալար Աբնուշը: Իսկ մի քանի օր անց միանգամից մի քանի իրանական լրատվամիջոցներ փոխանցեցին ԻՀՊԿ՝ անունը հրապարակել չցանկացող «մի բարձրաստիճան սպայի խոսքերը», որ «եթե ԱՄՆ-ը հարձակվի Սիրիայի վրա, ապա Թեհրանը գործի կոնի համատեղ պաշտպանության մասին [իրանա-սիրիական] պայմանագիրը, որը ալ-Ասադի հետ կնքվել է 2006-ին»¹:

Հասկանալի է, որ Բաշար ալ-Ասադի վարչակազմի անկումը կթուլացնի ոչ միայն Իրանի տարածաշրջանային ազդեցությունը՝ մեծացնելով նրա խոցելիությունն արտերկրից, այլև լուրջ հարված կլինի Իրանում իշխող վարչակազմի համար: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ հերթական նախագահական ընտրություններին (2013թ. հունիս) մեկ տարուց էլ քիչ ժամանակ է մնացել, իսկ նախագահական վերջին ընտրություններն աննախադեպ բացասական հետեւանքներ թողեցին Իրանում իշխող իսլամական համակարգի վրա: Այս տեսանկյունից Թեհրանին կարծես թե այլընտրանք չի մնում, ու, անշուշտ, ավելի ձեռնտու է մարտնչել Սիրիայում, քան սեփական տանը:

Ռազմաքաղաքական իրավիճակի շուրջ

Սեպտեմբերի սկզբին թուրքական լրատվամիջոցներն ուշագրավ մի տեղեկություն հաղորդեցին, թե Սիրիայի հյուսիսում՝ Թուրքիային սահմանակից սիրիական շրջաններում գործող ապստամբների զորաջոկատներից շատերի հրամանատարությունն անցել է թուրք սպաներին: Ընդ որում, տեղեկությունը հրապարակվեց սեպտեմբերի 3-ին Անկարա ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) տնօրեն Դեւիդ Պետրետուսի² այցից հետո:

Տեղեկությունը կարելու է այն իմաստով, որ ցույց է տալիս սիրիական ճգնաժամի դինամիկան՝ Բաշար ալ-Ասադին տապալել ցանկացող երկրները որոշում են կայացրել մեծացնել իրենց ներգրավվածությունը սիրիական պատերազմում, ինչը պետք է որ վկայի, թե առաջիկայում իրավիճակը Սիրիայում ու նրա շուրջ ավելի է սրվելու³:

Մոտավորապես նույն ժամանակահատվածում՝ ամռան երկրորդ կեսից սկսած, ակտիվ շրջանառության մեջ մտավ սիրիական բանակի քիմիական զինանոցի մասին թեման: Այն շրջանառության մեջ դրեցին երկու կողմն էլ: Բաշար ալ-Ասադի վարչակազմն ու նրա դաշնակիցներն այդ կերպ փորձեցին ի ցույց դնել իրենց ռազմական կարողությունները: Սակայն արեւմտյան տերությունները, թեման շրջանառելով, խնդիր դրեցին մեծացնել ճնշումն ալ-Ասադի վարչակազմի նկատմամբ ու ցույց տալ աշխարհին, թե որքան վտանգավոր է այն, քանի որ խոսքը զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) մասին է:

Սեպտեմբերին թեման զարգացում ստացավ: Ամերիկյան աղբյուրները գրեցին, թե ալ-Ասադի քիմիական զինանոցը տեղաբաշխվել է երկրի տարբեր մասերում, ինչը նշանակում է, որ այն վնասագերծելու համար արեւմտյան կոալիցիան պետք է մեծացնի իր մասնակցությունը սիրիական պատերազմում, այլապես ալ-Ասադի անկումից հետո զինանոցը կարող է հայտնվել իսլամիստ ահաբեկիչների ձեռքում:

Ընդհանրապես, ՁՈՁ տարրը ցանկացած միջազգային ճգնաժամի հետ կապելը ցույց է տալիս, թե այն ինչ կարելու է ձեռք բերել գլոբալ քաղաքականության համար (Յուլիսային Կորեա, Իրան, սադամյան Իրաք, Լիբիան Քադաֆիի օրոք եւ այլն): Սիրիական խնդրի պարագայում այդ տարրի հայտնվելը, դարձյալ, խոսում է իրավիճակի սպասվող սրման մասին:

Այն, որ ճգնաժամը Սիրիայի շուրջ սկսել է անմիջական ազդեցություն թողնել իրանական ուղղությամբ, հատկապես ակնառու դարձավ վերջին շաբաթներին: Իրավիճակը Լիբանանում սկսեց աստիճանաբար սրվել. երկրի շիա ու սուննի հատվածների միջեւ զինված ընդհարումներ տեղի ունեցան: Իրավիճակը սկսեց սրվել նաեւ լիբանանա-իսրայելական սահմանին: Հայտնի է Թեհրանի ազդեցությունը լիբանանյան «Հիզբալլահ» շարժման նկատմամբ, եւ 2006թ. իսրայելա-լիբանանյան պատերազմից հետո առաջին անգամ շարժման ներկայացուցիչները սկսեցին խոսել հրեական պետության հետ ռազմական բախման հավանականության մասին: Սեպտեմբերի 5-ին լիբանանյան «Ալ-Սայադին» հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալան հայտարարեց, որ եթե Իրանը հարձակման ենթարկվի

Իսրայելի կողմից, ապա պատասխան հարված կտրվի ոչ միայն հրեական պետությանը, այլև տարածաշրջանում եւ աշխարհում ամերիկյան հենակետերին⁴: Շատերը Նասրալայի այդ հայտարարությունն ընկալեցին որպես Իրանի կողմից իր լծակների ցուցադրում: Այս առումով ուշադրություն գրավեց նաև Պաղեստինի Գազայի հատվածում իշխող «Համաս» շարժման առաջնորդներից՝ Մահմուդ ա-Չահարի այցը Թեհրան (սեպտեմբերի 9): Հատկանշական է, որ ա-Չահարի հետ Իրանի մայրաքաղաք էին ժամանել «Համասի» ուժային կառույցների մի շարք ղեկավար-ներկայացուցիչներ՝ շարժման զորամիավորումների հրամանատարի տեղակալ Մարվան Իսայի ղեկավարությամբ:

Սեպտեմբերի կեսերին Պարսից ծոցում մեկնարկեցին ԱՄՆ ու նրա դաշնակիցների աննախադեպ մասշտաբի զորավարությունները: Ջորավարություններին միայն ամերիկյան կողմից մասնակցում էին երեք ավիակիր խմբեր: Ջորավարությունների հիմնական նպատակ հռչակվեց միջազգային որևէ ճգնաժամի պարագայում Հորնուզի նեղուցի շրջափակումը կանխելը եւ Պարսից ծոցում նավթի ու գազի արդյունահանման եւ տեղափոխման ապահովումը:

Հայտնի են Իրանի բազմաթիվ նախազգուշացումները, որ իր նկատմամբ ռազմական ագրեսիայի դեպքում իրանական ուժերը կփակեն նեղուցը, որտեղով յուրաքանչյուր օր անցնում է աշխարհում տեղափոխվող նավթի գրեթե 1/4-րդը: Սակայն այս անգամ միջազգային փորձագետները ԱՄՆ ու նրա դաշնակիցների զորավարությունները կապեցին սիրիական խնդրի հետ՝ որպես Իրանին ուղղված ուղերձ:

ԱԷՄԳ նոր հաղորդումը

Հատկանշական է, որ Սիրիայի շուրջ եւ իրանական ուղղությամբ լարվածության աճին զուգահեռ՝ օգոստոսի վերջին Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ) հանդես եկավ նոր հաղորդագրությամբ, թե Իրանը զգալիորեն ընդլայնել է ուրանի հարստացման աշխատանքները՝ լրացուցիչ ցենտրիֆուգներ տեղադրելով միջուկային իր օբյեկտներում: Մասնավորապես, ըստ գործակալության, Ֆորդոյում գտնվող ուրանի հարստացման գործարանում առկա ցենտրիֆուգների քանակը կրկնապատկվել է. տեղադրվել են լրացուցիչ 1500 ցենտրիֆուգներ, որոնցից 800-ը՝ վերջերս: Նույն աղբյուրի փոխանցմամբ, Ֆորդոյի գործարանում արդեն 20% հարստացվող ուրանի քանակն ամռան երեք ամիսների ընթացքում 145 կիլոգրամից հասցվել է 190 կիլոգրամի:

ԱԷՄԳ հաղորդագրության ֆոնին առանձնացավ այն տեղեկությունը,

որ օգոստոսին իր պարտականությունների կատարմանն է վերադարձել հայտնի ֆիզիկոս, իրանական միջուկային ծրագրերի հիմնադիրներից մեկը համարվող Մոհսեն Ֆահրիզադեն, եւ որ հատուկ նրա համար իշխանությունները Թեհրանի մոտ ստեղծել են առանձին լաբորատորիա⁵:

Յեռանկարի վերաբերյալ

Փորձագետների գերակշիռ մասը համոզված է, որ տարածաշրջանում էական նոր զարգացումներ պետք է սպասել նոյեմբերին կայանալիք ԱՄՆ նախագահական ընտրություններից հետո: Այսօր Միացյալ Նահանգներում ընթացող բավական լարված ներքաղաքական պայքարը զգալիորեն կաշկանդում է Սիրիայի եւ Իրանի ուղղությամբ Վաշինգտոնի քայլերը: Գաղտնիք չէ, որ վարկանիշով իր նրցակից Միք Ռոմնիից շատ չտարբերվող Բարաք Օբամայի ու նրա թիմի համար այս պահին ամենեւին էլ ցանկալի չեն տարածաշրջանային գործընթացների խորացումը եւ ընդլայնումը, ինչը կարող է միջազգային նոր լարվածություն առաջացնել ու բացասաբար անդրադառնալ գլոբալ (այդ թվում նաեւ ամերիկյան) տնտեսության վրա: Այդ իմաստով, այլ իրավիճակ կարող է ստեղծվել ընտրություններից հետո:

¹ Սիրիայում իրանական ռազմական ներգրավվածության մասին վերջին շրջանում սկսեցին ակտիվորեն գրել նաեւ ամերիկյան ու եվրոպական լրատվամիջոցները: Սեպտեմբերի սկզբին The Times-ը, հղում կատարելով բրիտանական հետախուզության իր աղբյուրներին, գրեց, թե ամսվա սկզբին Իրանից Իրաք, իսկ հետո Սիրիա են ներթափանցել ԻՅՊԿ հատուկ նշանակության երկու զորամիավորումներ՝ 300 հոգի ընդհանուր թվաքանակով:

² Ընդհանրապես, ուշագրավ է, որ ԿՅՎ-ն գլխավորեց Իրաքում, իսկ այնուհետեւ ողջ Մերձավոր Արեւելքում ամերիկյան զորքերի հրամանատար, գեներալ Դեւիդ Պետրեուսը: Նման նշանակումը պարզորոշ ցույց էր տալիս տարածաշրջանի նշանակությունն ամերիկյան գլոբալ ռազմավարությունում (եթե նկատի ունենանք նաեւ, որ վերջին տասնամյակում տարածաշրջանում է կենտրոնացվել ԱՄՆ սահմաններից դուրս գտնվող ամերիկյան ռազմուժի ամենախոշոր միավորումը): Այս առումով արաբական հեղափոխություններն ու Մերձավոր Արեւելքի վերածենման մասին դատողությունները, ըստ ամենայնի, դեռ չեն հասել իրենց վերջակետին:

³ Այստեղ նշենք, որ ողջ ամառվա ընթացքում եվրոպական ու ամերիկյան մամուլում բազմիցս տեղեկություններ հրապարակվեցին Սիրիայում բրիտանական, ֆրանսիական ու կատարյան հատուկ նշանակության ջոկատների գործողությունների մասին: Իսկ ինչ վերաբերում է թուրքական մամուլի հաղորդած վերոնշյալ տեղեկությանը, ապա զուտ ռազմական տեսանկյունից այն կարող է վկայել Սիրիա թուրքական բանակի առաջիկա ներխուժման մասին:

⁴ Այս կապակցությամբ օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին ուշագրավ տեղեկություններ հրապարակեցին The New York Times-ն ու The Washington Times-ը: Առաջինը նախ գրեց, թե Կոստա Ռիկայի արտգործնախարար Էնրիկե Կաստիլիոն հայտարարել է, որ հարեւան Նիկարագուայի տարածքում Իրանը, որը լատինաամերիկյան այդ երկրի հետ հաստատել է սերտ քաղաքական ու տնտեսական հարաբերություններ, գաղտնի հենակետ է ստեղծել «Չիզբալլահի» զինյալների համար: Իսկ մոտ տասն օր անց, The Washington Times-ը տեղեկացրեց, որ ամերիկա-մեքսիկական սահմանին ձերբակալվել են «Չիզբալլահի» երեք զինյալներ:

⁵ Չիչեցնենք, որ Ֆահրիզադեն աշխատանքից ազատվեց 2006թ., երբ ամերիկա-իրանական հարաբերություններում որոշակի մեղմացում էր նկատվում, իսկ 2007թ. դեկտեմբերին ամերիկյան հետախուզությունը հրապարակեց հայտնի զեկույցը, ըստ որի՝ դեռ 2003-ին Իրանը փակել էր միջուկային զենքի ստեղծման իր ծրագիրը: Այս առումով Մոհսեն Ֆահրիզադեի վերադարձը կարող է նշանակել, որ վերջին տարիներին Թեհրանը վերանայել է իր միջուկային ծրագիրը:

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ԹՈՒՐՔ – ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Չայկ Գաբրիելյան

Սիրիական ճգնաժամի հարցում Թուրքիայի որդեգրած հայտնի դիրքորոշման պատճառով խախտվեց թուրք-սիրիական «ջենթլմենս շիմ» համաձայնագիրը», ըստ որի՝ երկու երկրները փոխադարձ չեզոքություն էին պահպանում քրդական հիմնախնդրի հարցում: Սակայն Թուրքիայի դիրքորոշումը Սիրիայի ղեկավարությանը ստիպեց գնալ աննախադեպ քայլի: Երկրի հյուսիսային շրջաններում բնակվող սիրիացի քրդերին տրամադրել փաստացի ինքնավարություն՝ ռեժիմին աջակցելու դիմաց: Արդյունքում՝ Թուրքիային սահմանակից մի շարք բնակավայրեր հայտնվեցին քրդերի ձեռքում: Այդ տարածքների փաստացի ղեկավարումն իր վրա վերցրեց Դեմոկրատական միություն կուսակցությունը (PYD), որը վերջին 30 տարիներին Թուրքիայի դեմ պատերազմ մղող Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) դաշնակիցն է:

Քրդերն իրենց վերահսկողության տակ վերցրին վարչական ղեկավարման կենտրոնները, ինչպես նաև բացեցին ազգային դպրոցներ: Դրանով իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադն ապահովեց ամուր թիկունք եւ իր ու իրեն թիրախավորած Թուրքիայի միջև զետեղեց PKK-ին: Սիրիայի հյուսիսում գտնվող քաղաքների վարչական շենքերում հայտնվեցին PYD-ի ու PKK-ի դրոշմերը:

Սիրիայի քրդերը մեծ աջակցություն ստացան Զյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունից, որը դիվանագիտական աջակցության հետ մեկտեղ նրանց մատակարարեց զենք եւ զինամթերք: Երբիլը նաև ամեն կերպ աջակցեց դեպի թուրք-սիրիական սահման Քրդստանի աշխատավորական կուսակցության զինյալների փոխադրմանը՝ «Մեծ Քրդստանի» ստեղծման գաղափարի կյանքի կոչմանն աջակցելու եւ իրաքյան փորձը Սիրիայում կրկնելու համար:

Չուլիսի վերջին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան թույլ չի տա Սիրիայի հյուսիսում քրդական պետության ստեղծումը. «Սիրիայի հյուսիսում քրդական պետության ստեղծումը Թուրքիայի համար նշանակում է PKK-ի ահաբեկչական սպառնալիքի ուժեղացում: Մենք դա չենք ճանաչի որպես քուրդ ժողովրդի պետություն, դա կլինի ահաբեկչական կազմավորում, ինչի համար էլ

Անկարան դա թույլ չի տա: Անկարան ձեռքերը ծալած չի հետելի Սիրիայի հյուսիսում ընթացող զարգացումներին եւ անպայմանորեն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի նմանատիպ կազմավորման առաջացման անթույլատրելիության ուղղությամբ: Մենք իրավասու ենք Սիրիայի տարածքում հետապնդել ահաբեկիչներին, եթե նրանք անթույլատրելի գործողություններ իրականացնեն թուրքիայի տարածքում: Արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն մեկնելու է Զյուսիսային Իրաքի Քրդական ինքնավարություն՝ ստեղծված իրավիճակը քննարկելու համար»:

Երբիլ մեկնելուց առաջ Դավութօղլուն իր հերթին հայտարարեց. «Թուրքիան թույլ չի տա, որ ահաբեկչական կազմակերպությունները՝ լինի PKK-ն կամ «Ալ Բաիդան», բույն դնեն Սիրիայի հյուսիսում՝ Թուրքիայի հետ սահմանին: Թուրքիան կձեռնարկի բոլոր քայլերը՝ Սիրիայի հետ իր սահմանին ահաբեկչության կանխման համար: Թուրքիան դեմ է PKK-ի կողմից Սիրիայի հյուսիսում պետության կամ մեկ այլ կազմավորման ստեղծմանը: Մասուդ Բարզանիի ձեռնարկած միջոցները բավական չեն ահաբեկչության խնդրի լուծման համար»:

Օգոստոսի 1-ին Դավութօղլուն այցելեց Երբիլ եւ Բարզանիին հանձնեց Ռեջեփ Էրդողանի նամակը, որում Էրդողանն Իրաքյան Քրդստանի ղեկավարությունից պահանջում էր դադարեցնել աջակցությունը Սիրիայի քրդերին: Նամակում նաեւ նշված էր, թե Թուրքիան թույլ չի տա, որ իրեն սահմանակից Սիրիայի շրջաններում ստեղծվի քրդական ինքնավարություն, հատկապես նրա համար, որ այն իր վերահսկողության տակ է առնելու PYD-ը:

Սակայն Զյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության ղեկավար Մասուդ Բարզանիի հետ մերձենալու Էրդողանի փորձերը չպսակվեցին հաջողությամբ: Բարզանին կազմակերպեց Սիրիայի քրդերի կոալիցիան, որի առաջատար ուժը դարձավ PYD-ը: Մասուդ Բարզանին աջակցեց Սիրիայի քրդերի բարձրագույն խորհրդի (ՍԲԲԽ) ստեղծման ու համագործակցության մասին համաձայնագրի կնքմանը, որով եւ մեծապես բարձրացրեց էթնիկ քրդերի շրջանում իր ունեցած հեղինակությունը: Մինչդեռ, սիրիական հակամարտությունն սկսվելուց ի վեր՝ Թուրքիան փորձում է Բարզանիին հանդգել միանալ սիրիական ընդդիմությանը եւ ընդհանրապես ստանալ նրա աջակցությունը PKK-ի դեմ պայքարում:

Իր հերթին, PKK-ն հաջողությամբ օգտագործում է Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընձեռած հնարավորությունները: Վերջին շաբաթներին Թուրքիայի արեւելյան ու հարավարեւելյան հատվածում կազմակերպվել են մի շարք խոշոր հարձակումներ, որոնց հետեւանքով զոհվել են տասնյակ թուրք զինծառայողներ: PKK-ն անգամ օպերացիա ձեռնարկեց՝

Թուրքիայի հարավարեւելյան հատվածում «ազատագրված շրջան» ստեղծելու համար, որով եւ շուկի մեջ գցեց ոչ միայն թուրք հասարակութեանը, այլեւ իշխանություններին: Երդողանը PKK-ի ակտիվացման մեջ մեղադրեց Բաշար Ասադին՝ ընդգծելով, որ նա դրա շնորհիվ ցանկանում է խնդիրներ ստեղծել Թուրքիայի համար:

Անկասկած է, որ PKK-ի այդ ակտիվացումը շաղկապված է նաեւ սիրիական զարգացումների հետ, քանի որ դրա նպատակներից մեկը սիրիական սահմանից թուրքական զորքերի փոխադրումն է իրաքյան սահման եւ դեպի Իրաք թուրքական նոր ներխուժում սադրելը: Այդ ամենը պետք է հանգեցնի «Սիրիայի ազատ բանակին» թուրքական աջակցության թուլացմանը: Ավելի լայն իմաստով, PKK-ն փորձում է դրանով իսկ տապալել Անկարայի ու Երբիլի մերձեցումը:

PKK առաջնորդներից Մուրադ Քարայըլանը, մեկնաբանելով Սիրիայի քրդերին հասցեագրած Երդողանի սպառնալիքները, հայտարարեց. «Եթե Թուրքիան ներխուժի Արեւմտյան (սիրիական) Քուրդիստան, ապա ողջ քուրդ ժողովուրդը կդիմակայի Թուրքիային: Այդ ժամանակ կմոբիլիզացվեն համայն աշխարհի քրդերը»: Քարայըլանը նաեւ հայտարարեց, որ PKK-ն իր ակտիվ գործունեությունը Թուրքիայում կշարունակի ծավալել նաեւ մուսուլմանների համար սրբազան Ռամադան ամսին:

Թուրքիայում PKK-ի այդ ակտիվությունը հանգեցրեց նրան, որ սեպտեմբերի սկզբին ֆրանսիական Le Monde թերթը գրեց, որ այս ամառը Թուրքիայի համար ամենաարյունոտ ամառներից մեկն էր 1990-ական թվականներից հետո: Իսկ թուրք լրագրող եւ վերլուծաբան Մեհմեթ Ալի Բիրանդի խոսքերով՝ այս ամառը թուրքական կողմի համար վերջին 14 տարիների (երբ ձերբակալվեց PKK-ի հիմնադիր եւ առաջնորդ Աբդուլա Օջալանը) ամենավատ ամառն էր:

Թուրքական մամուլի պնդմամբ՝ PKK-ի զինյալները Թուրքիայի դեմ պայքարում օգտվում են Իրանում ունեցած իրենց բազայից՝ Յյուսիսային Իրաքից տեղափոխվելով Իրանի տարածքում գտնվող ճամբար: Ըստ թուրքական մամուլի՝ Իրանն աջակցում է PKK-ին՝ ընդդեմ Թուրքիայի, քանի որ խիստ դժգոհ է Ասադի հանդեպ Թուրքիայի իշխանությունների որդեգրած դիրքորոշումից, ինչպես նաեւ՝ Թուրքիայի տարածքում (Մալաթիա) ամերիկյան ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայումից:

Բացի այդ, թուրքական մամուլը գրեց, թե Թուրքիայի հատուկ ծառայությունները ձերբակալել են ավելի քան 20 իրանական լրտեսի, որոնք իրանական կողմին հանձնել են Թուրքիայի անվտանգության համար առանձնահատուկ կարեւորություն ունեցող տեղեկատվություն: Նրանց հարցաքննության ժամանակ պարզվել է, որ 2012 թվականի մարտից

Իրանը Թուրքիա է ուղարկել եւս 100 լրտեսների, որոնք Թուրքիայի տարածքում հայտնվել են որպես լրագրողներ կամ դեսպանատան աշխատակիցներ: Իրանցի այդ գործակալները Թուրքիայի տարածքում կապ են հաստատել PKK-ի հետ եւ տեղեկատվություն են հավաքել թուրքական ռազմական օբյեկտների ու սիրիացի փախստականների մասին:

Թուրքիայի հիմնական ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) առաջնորդ Քեմալ Քըլլըչդարօղլուն սիրիական զարգացումների կապակցությամբ խստապես քննադատել է իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությանը (ԱԶԿ). «Երդողանի ԱԶԿ-ն ոչ մի կանխիչ միջոց չձեռնարկեց քրդական հարցը չարելու համար: Բոլորը գիտեին, որ Սիրիայում առաջանալու է քրդերի հարցը, ինչպես որ եղավ Իրաքի պարագայում: Եվ ի՞նչ արեցինք մենք: Ինչպե՞ս կարելի է գործել՝ առանց վերլուծության ենթարկելու արտաքին քաղաքական ոլորտում ձեռնարկվող քայլերը, առանց հետեւելու գործընթացներին: Դավութօղլուն Թուրքիայի ցայժմ ունեցած արտգործնախարարների թվում ամենավատն է: Նա ասում էր զրո խնդիր, սակայն այսօր կան բազում խնդիրներ: Ո՞ր ուղղությամբ է Դավութօղլուն հաջողություններ գրանցել: Մերձավորարեւելյան երկրների ներքին գործերին միջամտելու արտաքին քաղաքականությունը որեւէ լավ բանի չհանգեցրեց: Արտաքին քաղաքական դաշտում մենք դարձել ենք մերձավորարեւելյան ճահճուտում խրված մի երկիր: Սիրիայի հարցում Թուրքիան վերածվել է Արեւմուտքի գործիքի, ինչի հետեւանքը եղավ քրդական նոր պետության ստեղծման հնարավորությունը»:

Ներկայումս Սիրիայի քրդերը վերահսկողություն են հաստատել Սիրիայի հյուսիսարեւելյան շրջանի վրա եւ հրաժարվում են միանալ ընդդիմադիր Սիրիայի ազգային խորհրդին՝ չվստահելով նրան հետաստդյան շրջանում իրենց առնվազն ինքնավարություն տալու հարցում: Սիրիայի քրդերը պատրաստ են երկրի հյուսիսում կազմավորել ինքնավար շրջան, ինչպես որ այն գոյություն ունի Իրաքի հյուսիսում: Իսկ Անկարան սկսել է գիտակցել, որ իր համար ամենավատ տարբերակը՝ քրդական դաշնության ի հայտ գալը, դառնում է ակնհայտ:

Սիրիայի հյուսիսում գտնվող քաղաքները տեղի քրդերի վերահսկողության տակ անցնելը մեծապես ոգեւորում է նաեւ Թուրքիայի քրդերին, որոնք դրանում տեսնում են «Մեծ Քուրդիստանի» կազմավորման սկիզբը, որը ներառելու է նաեւ Թուրքիայի տարածքի մի խոշոր հատված: Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը հայտարարել է, որ Թուրքիայի հարավարեւելյան հատվածում բնակվող քրդերը ցանկանում են ունենալ իրենց քաղաքական ու վարչական կարգավիճակը՝ ընդգծելով, որ

Թուրքիայի, Իրանի ու Սիրիայի տարածքներում գործելու են այնպիսի ինքնավարություններ, ինչպիսին որ Հյուսիսային Իրաքում է: Իսկ ահա քուրդ պատգամավոր Ահմեթ Թուրքը հայտարարել է, որ յուրաքանչյուր ոք պետք է իմանա, որ «Մեծ Քուրդիստանի» 4 մասերը միավորվելու են:

Ներկա փուլում Անկարան, թերեւս, հակված չէ Սիրիայի քրդերի խնդրի ռազմական լուծմանը, թեւէ շարունակ սպառնում է ներխուժել Սիրիայի հյուսիս, զորք եւ տեխնիկա է կուտակում Սիրիայի հետ սահմանին, ինչպես նաեւ շարունակաբար վարժանքներ է անցկացնում սիրիական սահմանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Թուրքիայի կողմից Սիրիայի հյուսիսին ռազմական հարված հասցնելու համար կան բազմաթիվ զսպիչ գործոններ՝ քրդական արյունալի դիմակայություն, Իրանի, Ռուսաստանի ու Չինաստանի կոշտ հակազդեցություն եւ այդ հարցում անգամ ԱՄՆ բացասական դիրքորոշում, սիրիական ընդդիմությանն աջակցող արաբական երկրների անկանխատեսելի արձագանք եւ այլն: Թուրք փորձագետ Սուլի Օզելի կարծիքով՝ Թուրքիայի կողմից Սիրիայի քրդերի դեմ ռազմական գործողություններ սկսելը նրա համար հավասարազոր կլինի ինքնասպանության, քանի որ այդ դեպքում Թուրքիան ստիպված կլինի պատերազմել երկու եւ անգամ երեք ճակատով (Թուրքիայի եւ Իրաքի քրդերի դեմ էլ):

Դրա հետ մեկտեղ, Թուրքիան քաջ գիտակցում է Սիրիայի քրդերի ինքնավարության ձեռքբերումից բխող հնարավոր ռիսկերը եւ ողջ հույսը դրել է սիրիացի ապստամբներին ամեն գնով աջակցելու վրա, որպեսզի Ասադի տապալումից հետո ունենա իր հանդեպ բարյացակամ տրամադրված վարչակարգ եւ կարողանա վերահսկել Սիրիայի քրդերին առնչվող իրադարձությունները:

ԱՄՆ-Ը ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄՆ-ում մեկնարկած նախագահական ընտրարշավում արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնախնդիրներն առայժմ վճռական ազդեցություն չունեն. ամերիկացի ընտրողներին առավել շատ հուզում են տնտեսության վիճակին ու առողջապահական համակարգին վերաբերող հարցերը: Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ արտաքին քաղաքականության կարելու ուղղությունների վերաբերյալ թեկնածուներն ունեն զգալիորեն տարբեր տեսակետներ: Ընտրարշավում արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնական թեմաներն են՝ Իրանի միջուկային ծրագիրը, իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումը, «արաբական գարնան» հետ կապված զարգացումները, ռուս-ամերիկյան հարաբերությունները, ինչպես նաեւ հարաբերությունները Չինաստանի հետ:

Իրանի միջուկային ծրագիր

2009թ. զբաղեցնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Օբաման հայտարարեց Իրանի հետ ուղիղ երկխոսություն սկսելու եւ այդ պետության միջուկային ծրագրին առնչվող խնդիրները բանակցությունների միջոցով կարգավորելու պատրաստակամության մասին: Սակայն «հինգ գունարած մեկ» ձեւաչափով անցկացված բանակցությունների մի քանի անհաջող փուլերից հետո ամերիկյան նոր վարչակազմը ձեռնամուխ եղավ Իրանի դեմ հավելյալ պատժամիջոցների կիրառման քաղաքականությանը՝ այդ ճանապարհով փորձելով հասնել Իրանի կողմից ուրանի հարստացման աշխատանքների դադարեցմանը: Միեւնույն ժամանակ, ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչները շարունակում են հայտարարել, որ Իրանի միջուկային ծրագիրը դեռեւս հնարավոր է կարգավորել բանակցությունների միջոցով, իսկ Իրանի դեմ ռազմական հարվածը չի հանգեցնի ցանկալի արդյունքների: Այդ մասին նախագահ Օբաման նշել է նաեւ 2012թ. մարտին ԱՄՆ հրեական լոբբինգային ամենաազդեցիկ կազմակերպության՝ «Ամերիկա-իսրայելյան հանրային հարաբերությունների կոմիտեի» համագումարի ժամանակ ունեցած ելույթում: Օբամայի վարչակազմը նաեւ հորդորում է Իսրայելին

ձեռնպահ մնալ Իրանի դեմ ռազմական հարվածից: Այդ մասին հայտարարել է վերջին ամիսներին Իսրայել այցելած ԱՄՆ պաշտպանության նախարար Լեոն Պանետան, ինչպես նաև այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Նախագահի հանրապետական թեկնածու Ռոմնին եւս հանդես է գալիս Իրանի նկատմամբ կոշտ տնտեսական պատժամիջոցների կիրառման օգտին՝ միեւնույն ժամանակ ավելի հստակ հայտարարելով անհրաժեշտության դեպքում ռազմական ուժ կիրառելու պատրաստակամության մասին: Ռոմնին նաև քննադատում է Օբամային՝ 2009թ. հունիսին Իրանում կայացած նախագահական ընտրություններից հետո ընդդիմության կողմից կազմակերպված հակակառավարական շարժումներից մեկը: 2012թ. մարտի 6-ին «Վաշինգթոն փոսթ» պարբերականում հրատարակված «Ինչպես ես կկանխեմ Իրանի միջուկային հավակնությունները» հոդվածում Ռոմնին նշել է, որ անհրաժեշտ է վերականգնել ամերիկյան ավիակիրների կանոնավոր ներկայությունն Արեւելյան Միջերկրածովում եւ Պարսից ծոցում, ինչպես նաև ավելացնել Իսրայելին տրվող ռազմական օժանդակությունը:

Իսրայելա-պաղեստինյան հակամարտություն

Ամերիկյան նոր վարչակազմի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը իսրայելա-պաղեստինյան ուղղակի բանակցությունների վերսկսումն էր: Այս ուղղությամբ Օբաման արձանագրեց որոշ հաջողություններ, սակայն 2010թ. աշնանը բանակցությունները դադարեցին այն բանից հետո, երբ Իսրայելը հրաժարվեց երկարած գել Արեւմտյան ափում հրեական նոր բնակավայրերի կառուցման վրա դրված մորատորիումը: Իսրայելա-պաղեստինյան կարգավորման վերաբերյալ Օբաման իր դիրքորոշումը ներկայացրեց 2011թ. մայիսին՝ հայտարարելով, որ խնդիրը հնարավոր է կարգավորել երկու պետությունների ստեղծմամբ: Ինչ վերաբերում է տարածքային խնդիրներին, ապա Օբաման նշեց, որ անհրաժեշտ է վերադառնալ 1967թ. սահմաններին՝ որոշակի տարածքային փոխանակումների իրականացմամբ: Սակայն այս առաջարկը մերժվեց Իսրայելի վարչապետ Նեթանյահուի կողմից, որն Օբամայի ելույթից մի քանի օր անց ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում հայտարարեց, որ Իսրայելը չի կարող ընդունել «անպաշտպան» սահմաններին վերադարձ կատարելու առաջարկությունը: Միեւնույն ժամանակ, Օբամայի վարչակազմը չաջակցեց

ՄԱԿ անդամ դառնալու Պաղեստինյան ինքնավարության փորձերին: 2012թ. հուլիսին Օբաման ստորագրեց Կոնգրեսի ընդունած օրինագիծը, որը նախատեսում է ընդլայնել կապերն Իսրայելի հետ անվտանգության ոլորտում եւ հայտարարեց Իսրայելի հակահրթիռային պաշտպանության «Երկաթե գմբեթ» համակարգի ֆինանսավորման նպատակով յոթանասուն միլիոն դոլար հատկացնելու մասին:

Ռոմնին որդեգրել է առավել իսրայելամետ դիրքորոշում: Նա քննադատում է Օբամային Մերձավոր Արեւելքում ԱՄՆ թիվ մեկ դաշնակցի հետ հարաբերությունները վատթարացնելու համար եւ հայտարարել է, որ նախագահ ընտրվելու դեպքում առաջին օտարերկրյա այցելությունը կկատարի Իսրայել: Ռոմնին նաեւ նշում է, որ Իսրայելի կողմից Արեւմտյան ափում եւ Արեւելյան Երուսաղեմում հրեական բնակավայրերի շինարարությունը չպետք է որպես խոչընդոտ դիտարկել իսրայելապաղեստինյան ուղիղ բանակցությունների համար: Միաժամանակ, հանրապետական թեկնածուն խոստանում է կրճատել Պաղեստինյան ինքնավարությանը տրամադրվող ամերիկյան օժանդակությունը, եթե վերջինս շարունակի ՄԱԿ անդամ դառնալու փորձերը, կամ եթե ինքնավարությունում ձեւավորվի միասնական կառավարություն ՅԱՄԱՍ-ի ներգրավմամբ:

«Արաբական գարուն»

Օբամայի վարչակազմն ընդհանուր առմամբ հանդես է գալիս «արաբական գարնան» գործընթացների պաշտպանությամբ: 2011թ. մայիսին Օբաման հայտարարեց, որ Միացյալ Նահանգները մտադիր է զգալի ֆինանսական աջակցություն ցուցաբերել անցումային փուլում գտնվող արաբական պետություններին: Քննադատելով Սիրիայում եւ Լիբիայում ընդդիմության նկատմամբ իշխանությունների կողմից ուժի կիրառումը, իսկ Լիբիայում ակտիվորեն մասնակցելով ՆԱՏՕ իրականացրած ռազմական գործողությանը՝ Օբամայի վարչակազմը, միեւնույն ժամանակ, շատ ավելի զուսպ արձագանքեց Բահրեյնում տեղի ունեցող իրադարձություններին՝ սահմանափակվելով միայն Բահրեյնի իշխանություններին ուղղված բարեփոխումների կոչերով:

ԱՄՆ-ը աստիճանաբար կոշտացնում է դիրքորոշումը Բաշար Ասադի վարչակազմի նկատմամբ՝ քննարկելով ընդդիմությանը զենքի եւ զինամթերքի տրամադրման հնարավորությունը:

Ռոմնին եւս հանդես է գալիս «արաբական գարնան» աջակցությամբ՝ միեւնույն ժամանակ հայտարարելով, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել

տարածաշրջանում Իրանի ազդեցության աճը կանխելու ուղղությամբ: Եգիպտոսի հետ հարաբերություններում Ռոմնին շեշտում է Իսրայելի անվտանգության ապահովման կարեւորությունը՝ հայտարարելով, որ Եգիպտոսին ռազմական օգնության տրամադրումը պետք է պայմանավորել Իսրայելի հետ կնքված խաղաղության պայմանագրի նկատմամբ Եգիպտոսի նոր իշխանությունների դիրքորոշմամբ:

Ռուս-ամերիկյան հարաբերություններ

Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավումը Բարաք Օբամայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն էր: Ամերիկյան կողմի նախաձեռնությամբ մեկնարկած ռուս-ամերիկյան «վերագործարկումը» համարվում է Օբամայի արտաքին քաղաքականության կարեւոր նվաճումներից մեկը: Այս ոլորտում ձեռք բերված հիմնական հաջողությունը ռազմավարական նշանակության միջուկային զենքերի կրճատման նոր պայմանագրի ստորագրումն էր: Գործող նախագահը զգալի կարեւորություն է տալիս նաեւ միջուկային խաղաղ էներգիայի օգտագործման շուրջ համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրերին, ԱՄՆ ակտիվ աջակցությամբ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ռուսաստանի անդամակցությանը, ինչպես նաեւ Ռուսաստանի դրական դիրքորոշմանը 2010թ. հունիսին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի ընդունման ժամանակ: Երկկողմ հարաբերությունների զարգացման ապացույց է նաեւ 2012թ. սեպտեմբերի 9-ին պաշտոնապես ուժի մեջ մտած ռուս-ամերիկյան համաձայնագիրը վիզային ռեժիմի մեղմացման վերաբերյալ:

Ռուս-ամերիկյան հարաբերություններում որոշակի լարվածություն է նկատվում սիրիական ճգնաժամի համատեքստում, այն բանից հետո, երբ Ռուսաստանը երկու անգամ վետո կիրառեց ՄԱԿ Անվտանգության խորհրդում ԱՄՆ աջակցությունը վայելող բանաձեւերի նկատմամբ: Այնուամենայնիվ, Բարաք Օբամայի նախագահության առաջին ժամկետի ընթացքում ռուս-ամերիկյան հարաբերությունները որոշակի առաջընթաց են ապրել, հատկապես՝ նախագահ Բուշ Կրտսերի նախագահության երկրորդ ժամկետի համեմատությամբ:

Ի տարբերություն Օբամայի, հանրապետական կուսակցության թեկնածուն շատ ավելի կոշտ դիրքորոշում է որդեգրել Ռուսաստանի նկատմամբ: 2012թ. մարտի վերջին CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Ռոմնին հայտարարել է, որ Ռուսաստանը ԱՄՆ թիվ մեկ

աշխարհաքաղաքական թշնամին է, որը խոչընդոտում է Սիրիայի եւ Իրանի նկատմամբ առավել կոշտ քաղաքականություն վարելու ԱՄՆ փորձերին: Տարբեր ելույթներում Ռոմնին նաեւ նշել է, որ նախագահ ընտրվելու դեպքում պատրաստվում է վերանայել ռազմավարական նշանակության միջուկային զենքերի կրճատման նոր պայմանագիրը, ինչպես նաեւ սանձել Ռուսաստանի հավակնությունները դեպի հարավ՝ այդ նպատակով ավելի սերտ հարաբերություններ հաստատելով Կենտրոնական Ասիայի պետությունների հետ:

Հուլիսին Լեհաստան կատարած այցելության ժամանակ Ռոմնին հայտարարեց, որ Լեհաստանի անցումը տոտալիտար վարչակարգից դեպի ժողովրդավարություն ուսանելի կարող է լինել ողջ աշխարհի համար, մինչդեռ Ռուսաստանը շեղվել է ազատություն տանող ճանապարհից: Նշենք, որ Ռուսաստանի նախագահ Պուտինը 2012թ. սեպտեմբերի սկզբին հրապարակված հարցազրույցներից մեկում նշել է, որ Օբամայի վերընտրվելու դեպքում ավելի հեշտ կլինի փոխզիջումների հասնել ռուս-ամերիկյան հարաբերություններում առկա մի շարք կնճռոտ խնդիրներում, այդ թվում՝ հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի տեղակայման հարցում, եւ միեւնույն ժամանակ քննադատել էր Ռոմնիին վերջինիս հակառուսական հայտարարությունների համար:

Հարաբերություններ Չինաստանի հետ

Նախագահ Օբամայի վարչակազմը Չինաստանի հետ փորձում է կառուցել համագործակցային հարաբերություններ: Այդ ուղղությամբ իրականացվող էական քայլերից մեկը «ԱՄՆ–Չինաստան ռազմավարական եւ տնտեսական երկխոսության» մեկնարկն էր: 2011թ. հունվարին Չինաստանի նախագահի՝ ԱՄՆ կատարած պետական այցելության ժամանակ Օբաման հայտարարեց, որ ներկայիս փոխկապակցված աշխարհում պետություններն ավելի բարեկեցիկ եւ ապահով կլինեն միասին աշխատելու պարագայում: Միեւնույն ժամանակ, Օբամայի վարչակազմը շարունակում է քննադատել Չինաստանին ազգային արժույթի արհեստական իջեցման համար եւ ուժեղացնում է ամերիկյան զինուժի ներկայությունը խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Օբամայի վարչակազմի օրոք զգալիորեն ավելացել են նաեւ ամերիկյան հայցերը Չինաստանի դեմ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում, այդ թվում 2012թ. օգոստոսին ներկայացված բողոքը, որը վերաբերում է Չինաստան արտահանվող ամերիկյան ավտոմեքենաների

նկատմամբ բարձր մաքսեր կիրառելու խնդրին: 2012թ. հունվարին ԱՄՆ-ը հրապարակեց պաշտպանական նոր ռազմավարությունը, որտեղ հստակ նշվում է քսանմեկերորդ դարում խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի աճող կարելորության եւ երկրագնդի այդ հատվածում ամերիկյան ռազմական գերակշռությունն ապահովելու անհրաժեշտության մասին:

Չինաստանի հետ հարաբերությունների հարցում Ռոմնիի դիրքորոշումը մասամբ համընկնում է գործող վարչակազմի մոտեցումների հետ: Ռոմնին եւս հանդես է գալիս Չինաստանի հետ համագործակցային հարաբերությունների օգտին՝ շեշտելով նաեւ Չինաստանի «անարդարացի» տնտեսական քաղաքականության դեմ գործուն պայքար իրականացնելու անհրաժեշտության մասին: Միեւնույն ժամանակ, Ռոմնին ընդգծում է Չինաստանի այլախոհներին առավել սերտ աջակցություն ցուցաբերելու կարելորությունը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Գագիկ Տեր-Հարությունյան

27 երկիր միավորող եւ շուրջ 500 մլն բնակչություն ունեցող Եվրամիությունը հանդիսանում է աշխարհի ամենախոշոր տնտեսությունը. ընթացիկ հաշվարկներով՝ ԵՄ ՀՆԱ-ն \$16.4 տրիլիոն է, ինչը կազմում է համաաշխարհային մոտ 28%-ը: Միեւնույն ժամանակ, այդ միությունն այսօր հայտնվել է քաղաքական եւ տնտեսական բարդ իրավիճակում: Մասնավորապես, խիստ աճել են պետական պարտքերը, ինչի հետեւանքով չի բացառվում, որ ԵՄ որոշ երկրներում դեֆոլտ հայտարարվի: Ստեղծված իրադրությունն ամենատարբեր հարթություններում հայտարարություններ եւ կանխատեսումներ կատարելու հիմք է ծառայում, որոնցում չեն բացառվում եվրոպական արժույթի ու ընդհանրապես ԵՄ փլուզման սցենարները՝ դրանցից բխող ծանր հետեւանքներով: Երբեմն նման հայտարարություններն ավելի շատ հիշեցնում են նախապես պլանավորված տեղեկատվական գործողություններ. որոշ քաղաքական գործիչների եւ վարկանիշային գործակալությունների գնահատականները կատարվում են շահադիտական դրդապատճառներով եւ նպատակ են հետապնդում ուղղորդել բորսաներում ու քաղաքական բանակցություններում ընթացող զարգացումները: Սակայն անգամ այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ «եվրոպական նախագծի» համար սկսվել են փորձությունների ժամանակները:

* * *

Եվրոպական ճգնաժամը հետեւանք է ոչ միայն գլոբալ նեոլիբերալ մոդելի կենսունակության ռեսուրսների սպառման, այլեւ ԵՄ-ին բնորոշ կառուցվածքային եւ կառավարման համակարգային յուրահատկությունների: Դրանք, չնայած գործադրվող ջանքերին, առայժմ թույլ չեն տալիս ձեւավորել միասնական քաղաքական-տնտեսական կանոններ, որոնք պարտադիր լինեն միության բոլոր անդամների համար:

Որպես եվրոպական համակարգի հիմնական թերացում առաջին հերթին դիտարկվում է «համաեվրոպական ինքնության» բացակայությունը: Եվրոպացի ազգերն, անշուշտ, ունեն բազմաթիվ քաղաքակրթական

ընդհանրություններ, սակայն զգալի են նաեւ մշակութային եւ քաղաքական ավանդույթների տարբերությունները: Այս համատեքստում պետք է հատկապես հաշվի առնել Մեծ Բրիտանիայի գործոնը, որն առանձնահատուկ է ոչ միշտ կառուցողական դիրք է գրավում ԵՄ գործընթացներում ու հանդես է գալիս որպես հյուսիսատլանտյան («անգլո-ամերիկյան»), բայց ոչ մայրցամաքային եվրոպական նախագծի մասնակից: Ավելին (եթե հենվենք, մասնավորապես, Ու.Չերչիլի հիշողությունների վրա), հետպատերազմյան եվրոպայի «ճարտարապետությունը» պլանավորվում էր այնպես, որպեսզի այնտեղ բացառվի ուժի կենտրոն (եւ դա վերաբերում էր ոչ միայն Գերմանիային) ձեւավորելու հնարավորությունը՝ այդպիսով ապահովելով անգլոսաքսոնյան ռազմաքաղաքական եւ տնտեսական գերակայությունը:

Համաեվրոպական ինքնության հիմնախնդրում լրացուցիչ գործոն են դարձել նաեւ «մուլտիկուլտուրալիզմի» երեւոյթը եւ դրանից բխող՝ եվրոպայի էթնիկական կազմի (հետեւաբար նաեւ մշակութային կողմնորոշումների) փոփոխության կարծես թե անխուսափելի միտումը: Այս խնդրի լուծման ուղղությամբ կատարվող քայլերը (իմիգրացիոն օրենքների խստացումը, շենգենյան համաձայնությունների վերանայումը եւ այլն), հաշվի առնելով Մեծ Մերձավոր Արեւելքից եւ աֆրիկյան մայրցամաքից դեպի եվրոպա մեծացած իմիգրացիոն հոսքերը, առայժմ շոշափելի արդյունքներ չեն տալիս:

Միեւնույն ժամանակ, կարելի է կարծել, թե իմիգրանտների (ներգաղթյալների) դեմ ծավալված դիմադրությունը (որն արտահայտվում է նաեւ ծայրահեղական գործողությունների տեսքով) որոշակիորեն նպաստում է համաեվրոպական համերաշխության կայացմանը: Սակայն այս ուղորտում նույնպես առկա են որոշակի հակասություններ:

Հակաիմիգրանտական մոտեցումները ԵՄ-ում առավել բնորոշ են պահպանողական կուսակցություններին: Մինչդեռ այդ կուսակցությունները, որպես կանոն, հանդես են գալիս նաեւ իրենց երկրների ինքնիշխանության ամրապնդման դիրքերից, ինչը խոչընդոտում է համաեվրոպական ինտեգրացիոն գործընթացներին: Առավել սերտ եվրաինտեգրման գաղափարին աջակից են եվրասոցիալիստները, որոնք էլ, իրենց հերթին, համեմատաբար հանդուրժողական դիրքորոշում ունեն «մուլտիկուլտուրալիզմի» հանդեպ:

Վերոնշյալի համատեքստում, թերեւս, տեղին է հիշել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի այն միտքը, թե եվրոպայում շատ է ոչ թե իսլամը, այլ քիչ է քրիստոնեությունը: Այդ իրողությունը եւ ընդհանրապես

Եվրոպական արդի քաղաքակրթական գործընթացներում տեղ գտած վիճելի միտումները հասարակագետները պայմանավորում են ներկայիս եվրոպական խիստ պարզունակացված արժեքային համակարգով: Ինչպես հայտնի է, ԵՄ երկրներում գերակա նպատակ է հռչակվել համընդհանուր բարեկեցության (այս հասկացությունը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս) հասնելը: Մինչդեռ նման հասարակական մոդելը պարունակում է բազմաթիվ ռիսկեր եւ համարվում է խոցելի, քանզի «Եվրոպական բարեկեցությունը» հենվում է «սպառողական հասարակության» կանոնների վրա՝ այստեղից բխող հոգեւոր ոլորտի արժեզրկման միտումներով:

ԵՄ պարագայում «բարեկեցության դոկտրինն» ունի նաեւ իր ֆինանսական արտահայտությունը՝ ի դեմս բյուջետային երբեմն չարդարացված բարձր ծախսերի, որոնք էլ բերում են պետական պարտքերի մեծացմանը: Հատկանշական է, որ մինչեւ 2008–2009թթ. «մեծ ճգնաժամը» ԵՄ 27 երկրներից 14-ի կառավարություններում մեծամասնությունը պատկանում էր սոցիալիստներին, որոնք առավել կարեւորում են «բարեկեցության» թեզը: Սակայն տնտեսական ռեցեսիան ցույց տվեց, որ բյուջետային առատածեռնությունը ծանր հետեւանքներ է ունենում, եւ այսօր Եվրամիությունում կա ընդամենը 5 սոցիալիստական կառավարություն: Սակայն Եվրոպան համակած սոցիալական բողոքի ցույցերից եւ հուզումներից հետեւում է, որ ոչ սոցիալիստական եւ զուտ շուկայական մոտեցումները նույնպես հղի են ռիսկերով, ու այդ ռիսկերը գուցե անգամ ավելին են, քան պետական բարձր հոգածության պարագայում, քանի որ կարող են հանգեցնել քառտիկ իրավիճակների, ինչպես դա տեսնում ենք Հունաստանում: Այդ առումով, Ֆրանսիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններում սոցիալիստ Օլանդի հաղթանակը պետք է համարել օրինաչափ եւ աղեկվատ եվրոպական արդի իրողություններին:

* * *

ԵՄ բոլոր անդամները, անշուշտ, ունեն հավասար իրավունքներ, սակայն գաղտնիք չէ, որ նրանցից ոմանք փոքր-ինչ «ավելի հավասար են, քան մնացածը»: Այստեղ խոսքը, իհարկե, եվրոպական մասշտաբով գերտերությունների՝ Գերմանիայի եւ Ֆրանսիայի մասին է: Մինչեւ Ֆրանսիայում տեղի ունեցած նախագահական ընտրությունները այդ երկրների ղեկավարները, չնայած որոշ տարածայնություններին, համատեղ մշակել եւ ձգտում էին իրագործել ԵՄ-ը ճգնաժամից դուրս բերելու

ծրագիրը (գլխավորապես՝ գերմանական դեղատոմսերով), որի հենքում ընկած էր բյուջետային սահմանափակումների եւ սոցիալական ոլորտում տնտեսումներ կատարելու ռազմավարությունը:

Իրադրությունը փոխվեց Ֆրանսուա Օլանդի նախագահ ընտրվելուց հետո, որը շեշտադրումն անում է ոչ այնքան տնտեսման, բյուջեի կրճատման քաղաքականության (չնայած դա էլ է մտնում Օլանդի պլանների մեջ. կառավարության նորանշանակ վարչապետն արդեն իսկ հայտարարել է կաբինետի անդամների աշխատավարձերի 30% նվազեցման մասին), որքան տնտեսության ակտիվացման եւ աճի ապահովման վրա: Պետք է արձանագրել, որ նախագահի 60 կետից բաղկացած ծրագիրը բավական արմատական դրույթներ է պարունակում: Մասնավորապես, ենթադրվում է փոքր ձեռնարկությունների հարկերի նվազեցում, իսկ բանկերի պարագայում՝ դրանց զգալի մեծացում, 150 հազար եվրոյից բարձր եկամուտ ունեցողների հարկերը կազմելու են 45%, իսկ 1 մլն-ից բարձր՝ 75%: Օլանդը տնտեսության աճը պայմանավորում է գիտատար արտադրությունների զարգացմամբ, եւ նրա ծրագրային դրույթներում կարելի է տեսնել գիտության զարգացման եւ անգամ «գիտական արիստոկրատիայի» վերականգնման վերաբերյալ կետերը: Խիստ հետաքրքիր է նաեւ Օլանդի մտադրությունը՝ ստեղծել եվրոպական նոր վարկանիշային գործակալություն, որն այլընտրանք կհանդիսանա մենաշնորհային դիրքեր գրաված Standart&Poors, Moody եւ Fitch Ratings ընկերություններին:

Սակայն Օլանդի նորարարությունները չեն սահմանափակվում միայն տնտեսությունով: Արտաքին քաղաքականությունում նա մտադիր է վերախմբագրել իր նախորդի մոտեցումները: Ինչպես հայտնի է, Ն.Սարկոզիի որոշմամբ 2009թ. Ֆրանսիան վերադարձավ ՆԱՏՕ ռազմական կառույցները, իսկ 2010-ին Մեծ Բրիտանիայի հետ կնքվեց պայմանագիր ռազմական, մասնավորապես՝ միջուկային զենքի մշակման ոլորտում համագործակցության մասին. ՋԼՄ-ն մեկնաբանեցին այդ պայմանագիրը որպես նախադեպը չունեցող եւ փաստորեն ֆրանս-բրիտանական համատեղ զինված ուժեր ստեղծելու սկիզբ (համաձայն այդ փաստաթղթի՝ կողմերը պայմանավորվել էին համատեղ 6,5 հազարանոց էքսպեդիցիոն ուժեր ստեղծել):

Այլ տրամաբանությամբ է շարժվում Օլանդը, որն արդեն իրագործել է նախընտրական խոստումը՝ դուրս բերել Աֆղանստանից ֆրանսիական զինծառայողներին (նրանք լքելու են այդ երկիրը մինչեւ այս տարվա վերջը): Առանձին ուշադրության է արժանի Օլանդի՝ ֆրանս-գերմանական

համատեղ ռազմական շտաբ ստեղծելու առաջարկը, ինչը որոշակի նախանշան է ՆԱՏՕ հետագա հնարավոր տրանսֆորմացիայի համատեքստում, եւ դա պետք է որ համընկնի Գերմանիայի քաղաքական գծի հետ. ինչպես հայտնի է, Ա.Սերկեյը բավական զուսպ վերաբերմունք ունի ՆԱՏՕ հավակնությունների հանդեպ Լիբիայի եւ Սիրիայի հայտնի գործընթացներում:

Այսպիսով, չի կարելի բացառել, որ ֆրանսիական արտաքին քաղաքականությունը հյուսիսատլանտյան մոդելի հանդեպ կարող է փոխվել (կամ, ավելի շուտ, վերադառնալ դը Գոլի մոտեցումներին), ինչը կարող է նպաստել լիարժեք մայրցամաքային եվրոպական համակարգի կայացմանը:

ԳԱԼԻՍ Է ՆՈՐ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Անդրեյ Ֆուրսով

2011-ը աչքի ընկավ նշանային մի շարք իրադարձություններով՝ «արարական գարուն», եվրոգոտու ճգնաժամ, բազմամշակութայնության գաղափարախոսության ծախսողում: Դրանք երկարաժամկետ հետեւանքների մի ամբողջ շղթա են ծնում: Ինչպիսի՞ն կարող են լինել այդ հետեւանքները: Ո՞վ կշահի փոփոխություններից: Ինչպե՞ս կանդորառնան Ռուսաստանի վրա եվրոպայում եւ աշխարհում ծավալվող գործընթացները: Այս եւ այլ հարցերի շուրջ մտորում է Մոսկվայի հումանիտար համալսարանի Ռուսական հետազոտությունների կենտրոնի տնօրեն **Անդրեյ Ֆուրսովը**: Հարցազրույցը թեւ տրվել է 2012-ի սկզբին, սակայն չի կորցրել իր այժմեականությունը:

Հարց – Ձեզ՝ որպես հետազոտողի, 2011-ի իրադարձություններից ի՞նչը հետաքրքրեց առաջին հերթին:

Պատ. – Ես կառանձնացնեի եվրոգոտու ճգնաժամը եւ Գերմանիայի վերելքը, ինչպես նաեւ նորվեգական միջադեպը: Այդ ամենը տեղի էր ունենում աշխարհում եւ Ռուսաստանում երկու դարաշրջանների՝ նեոլիթերալ հեղափոխության եւ հետխորհրդային դարաշրջանի միաժամանակյա ավարտի ֆոնին:

Եվրոգոտու ճգնաժամը 2011թ. կարելու իրադարձություններից էր, որը մի քանի շերտ եւ «պոչ» ունի: Այն վկայում է նեոլիթերալ համակարգի, հետեւաբար՝ ընդհանրապես գլոբալիզացիայի ճգնաժամի մասին: Եվրամիության արհեստականությունն այն տեսքով, ինչպիսին այն կառուցվել էր, սկսեց ի հայտ գալ արդեն 1990-ականների վերջին: 2008թ. ճգնաժամն այդ արհեստականությունն ավելի ակնհայտ դարձրեց: Այսօր խոր ճգնաժամի մեջ է հենց նեոլիթերալ, բազմամշակութային եվրոպան: Եվ դրանում ակնհայտորեն առանձնանում է հետնեոլիթերալ առաջնորդը՝ Գերմանիան, որպես «կարոլինգյան միջուկի» (Գերմանիա, Ֆրանսիա, Յուլիսային Իտալիա) կենտրոն:

Հարց – Ձեր կարծիքով՝ դա արդեն կատարված փա՞ստ է:

Պատ. – Կարծում եմ՝ այո: Գերմանիայի վերելքը, որով շահագրգիռ են այդքան տարբեր ուժեր, ինչպիսին են «Սեւ ինտերնացիոնալը» եւ

Չինաստանը, «ներկառուցված» է «Եվրամիության մայրամուտը» կասկադային իրադարձության մեջ: Ինչպիսին կլինի մայրամուտը՝ իրավաբանական, թե փաստացի, արդեն կարելու չէ: Պարզ է, որ 2012–2013թթ. այն Եվրոպան, որը ձեւավորվել էր Խորհրդային Միության փլուզումից հետո, անցյալի գիրկը կանցնի: Գերմանիայի այս վերելքը ցույց է տալիս նաեւ գլոբալիզացիայի «աճի սահմանը», ըստ էության՝ դրա վերջնագիծը:

Նեոլիբերալ հեղափոխություն/գլոբալիզացիան հասել է իր նպատակներին եւ դրանով իսկ սպառել գոյություն ունեցող համակարգն ու դրա կազմակերպման ձեւերը՝ վերացնելով, օրինակ, ազգային պետությունը: Միեւնույն ժամանակ՝ նաեւ իրեն: Այսօր պարզ է, որ հարկավոր են այլ, ոչ թե պարզապես նեոլիբերալ, այլ հակալիբերալ ձեւեր, թեկուզեւ նրա համար, որ հաղթահարվի ճգնաժամը եւ մեղմվի երեսուն տարվա ընթացքում սանձազերծված ֆինանսաշուկայական, եւ որ պակաս կարելու չէ, սոցիալ-հոգեբանական, եթե չասենք՝ հոգեկան, տարերքը, դադարեցվի քաոսը:

Հարց – Դուք նկատի ունեք համաշխարհային տնտեսության, ֆինանսների քաոսայնացո՞ւմը:

Պատ. – 1980–2000թթ. քաոսն ընդգրկեց ոչ միայն ֆինանսական ոլորտը: Այն կործանեց ոչ միայն իրական տնտեսությունը, ազգային պետությունն ու քաղաքականությունը, այլեւ, ինչը հատկապես կարելու է, գիտակցության ոլորտը: Նեոլիբերալ հեղափոխությունը հավասարակշռությունից զրկեց մարդկանց գիտակցությունը: Գլոբալ քաոսին այլընտրանք եւ հակազդեցություն կարող են դառնալ (մասամբ արդեն դառնում են) իշխանության եւ հարստության հետզլոբալ բյուրեղացման կենտրոնները, որոնք գլոբալ չեն իրենց մասշտաբով եւ միեւնույն ժամանակ տարածքային ու ժողովրդագրական առումներով գերազանցում են անցյալի գիրկն անցնող ազգային պետությանը:

Արտաքնապես դա նման է այն բանին, որ գլոբալ համակարգը բաժանվում է կայսերական կազմավորումների տիպի բլոկների: Կազմավորողները նույնիսկ սկսել են խոսել կայսրությունների վերածննդի մասին՝ Գերմանական, Օսմանյան, Բրիտանական:

Գերմանիան նման «կայսրություն» ստեղծելու թիվ մեկ թեկնածուն է: Ըստ էության, այդ մասին արդեն գրում են անգամ թերթերում: Օրինակ, 2011թ. օգոստոսի 17-ին Daily Mail-ը հրապարակել է «Չորրորդ ռեյխի վերածնունդը կամ՝ ինչպես է Գերմանիան օգտագործում ֆինանսական ճգնաժամը Եվրոպան նվաճելու համար» հոդվածը: Հոդվածում խոսվում

է այն մասին, որ Գերմանիան ստեղծում է Եվրոպայի Միացյալ Նահանգներ, որոնք ամենեւին էլ դեմոկրատական չեն լինի, այլ ընդհակառակը:

Հասկանալի է՝ սրանում մասամբ նկատվում են բրիտանացիների ավանդական երկյուղները գերմանացիներից: Բայց միայն մասամբ: 1940թ. Չերչիլը նշել է, որ բրիտանացիները պայքարում են ոչ թե Հիտլերի, այլ Շիլլերի ոգու դեմ, որպեսզի այն երբեք չվերածնվի: Ինչպես երեւում է, XX դարի գլխավոր ռուսատյացներից ու գերմանատյացներից մեկը սխալվել է. ոգու մասին խոսելը դժվար է, բայց, ահա, Գերմանիան արդեն վերածնվել է, եւ հենց գերմանացիներն են ընթանում Եվրոպայի վերածննդի առջեւից: Համենայնդեպս, դրա կենտրոնական մասի վերածննդի դա միանգամայն բավարար է կենսունակ հակալիբերալ, կայսրության տիպի Եվրոպա ստեղծելու համար: Խոսքը հենց կայսրության տիպի կազմավորումների մասին պետք է լինի, նորի ստեղծման, այլ ոչ թե հնի վերածննդի մասին:

Հարց – Դուք կարծում եք, որ հենց ա՞յդ ձեւն է փոխարինելու գլոբալիզացիային՝ իր կառույցներով:

Պատ. – Կայսրությունների ժամանակն անցել է: Բայց անցել է նաեւ դրանց փոխարինելու եկած ազգային պետությունների ժամանակը: Ինչպես եւ գլոբալիզացիայինը, որը խափանել է այդ պետությունները:

Կայսրության տիպի կազմավորումները (ԿՏԿ) վերազգային իշխանություն են, սուպերկոնցեռն եւ օրդեն՝ միաժամանակ, որոնք համակցում են ինստիտուցիոնալ-հիերարխիկ եւ ցանցային սկզբունքները: Դրանք ավելի կամ պակաս չափով օրգանական վերազգային բլոկներ են՝ 300-350 մլն մարդուց ոչ պակաս բնակչությամբ: ԿՏԿ կառավարման արտաքին սուբյեկտը կլինեն պետական բյուրոկրատիաները՝ զինվորականների եւ հատուկ ծառայությունների զգալի դերով, որոնց դերը ճգնաժամային պայմաններում կմեծանա, եւ որոնք գոտեմարտի մեջ մտան ֆինանսական կապիտալի հետ, որն իրենց պատերազմ էր հայտարարել 2008-ին եւ որը դատապարտված էր ճնշման՝ փոխզիջումային կամ ոչփոխզիջումային տեսքով:

Արտաքնապես ԿՏԿ ձեւավորումը կարող է ընդունել աջ ազգայնական (առնվազն՝ հակաբազմաձախութային) քաղաքական հեղափոխության ձեւ: ԿՏԿ-ն կարող է լինել միայն հակալիբերալ (աստիճանը կոնկրետ պատմական հանգամանքների հարց է): Իսկ դա նշանակում է, համենայնդեպս՝ Եվրոպայի համար, որ ճգնաժամի պայմաններում առաջին պլան կարող են դուրս գալ նոր տիպի աջ կուսակցությունները: Հավանաբար, պատմությունը կրկնվում է. 1929–1933թթ. ճգնաժամից Գերմանիան դուրս եկավ որպես Երրորդ ռեյխ, 2010-ական թթ.

համաշխարհային ճգնաժամից, որը, ինչպես արդեն նախազգուշացրել է Կ.Լազարյը, ավելի դաժան կլինի, քան 1929-ինը, Գերմանիան կարող է դուրս գալ որպես Յինգերորդ ռեյխ (Չորրորդ ռեյխը ցանցային կառույց էր՝ ստեղծված նախկին նացիստների կողմից 1940-ական թթ. կեսերին – 1950-ական թթ.):

Հարց – Ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ Եվրոպայի այն վերակառուցումը, որի մասին դուք խոսում եք:

Պատ. – Գերմանական միջուկով «Եվրոպա» ԿՏԿ-ի ի հայտ գալը կլուծի որոշ խնդիրներ եւ առաջ կբերի նորերը՝ ինչպես հարեւանների, այնպես էլ Ռուսաստանի համար: Մեզ դժվար թե արժե դրանից հիացմունքի մեջ ընկնել: Ռեւանշիզմը՝ որպես պատմական երեւույթ, ոչ ոք չի վերացրել: Սակայն կարճաժամկետ, հնարավոր է՝ նաեւ միջնաժամկետ հեռանկարում Գերմանիայի վերելքը դրական գործոն կհանդիսանա Ռուսաստանի համար: Ցանկացած դեպքում՝ մենք պետք է ստեղծենք մեր ԿՏԿ-ն, ինչպես էլ որ այն անվանվի՝ պատմական Ռուսաստան, թե Եվրասիական միություն, դա մեր միակ, թեւեւ ոչ անարդրելեմ շանսն է: Եվրոպական հավասարակշռության տրամաբանությունը կպահանջի ստեղծել Գերմանիայի հակահավասարակշռություն, որը կարող է դառնալ անգլո-ֆրանսիական միությունը, պակաս հավանական է ֆրանս-ռուսականը (Գերմանիայի եւ ՌԴ կապերի պատճառով), էլ ավելի պակաս հավանական է անգլո-ֆրանս-ռուսականը՝ Եվրասիայում, մասնավորապես՝ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում բրիտանացիների եւ ռուսների ավանդական պատմական դիմակայության պատճառով: Եվ քանի որ այս տարածաշրջաններում այսօր Մեծ Խաղ-2-ն է վարվում, որում բրիտանական եւ ռուսական շահերը բախվում են վերստին, ապա Անտանտ-2 հազիվ թե հնարավոր լինի: Լավագույն դեպքում՝ բրիտանա-ֆրանսիական միություն՝ այն ոգով, որը կար հետնապուլեոնյան դարաշրջանում:

Հարց – Եվ ի՞նչ հեռանկարներ ունի Մեծ Բրիտանիան:

Պատ. – Որպես ազգային պետություն Մեծ Բրիտանիայի ազատ նավարկությունն անհնար է: Այն ոչ ժողովրդագրական, ոչ էլ ֆինանսատնտեսական պոտենցիալ ունի: Միակ տարբերակը վերածնունդն է Բրիտանական կայսրության ԿՏԿ տեսքով: Բայց դրա համար կրկին բավականաչափ ֆինանսական բազա չկա: Իսկ բրիտանացիների գործունեության համար ավանդական գոտիներում նրանք դեմ են առնում Ռուսաստանին եւ Թուրքիային, որն ինքն է ջանում ԿՏԿ-ի վերածվել:

Օբյեկտիվորեն բրիտանացիների դաշնակից կարող են դառնալ հրեական կապիտալը եւ Իսրայելը: Հնարավոր են խաղեր Աֆրիկայի հարավում: Սակայն Մեծ Բրիտանիայի «ԿՏԿ»-ացման ճանապարհին լրջագույն խոչընդոտներ կան: Այդ գործընթացը պահանջում է հրաժարվել նեոլիբերալ գծից, որի գլխավոր հետեւորդն է Մեծ Բրիտանիայի թագավորական ընտանիքը: Վերջին հենարանը, տեղը, որտեղ թաքնված է նեոլիբերալ գլոբալիզացիայի «Կոշչեյի մահվան ասեղը», Բուքինհեմյան պալատն է: Վինձորները դրանով էլ կանգուն են եւ այլ կերպ չեն կարող: Կանգուն են՝ չնայած լրջագույն նախազգուշացումներին, որոնք այդ դինաստիան 2011թ. ամռանը ստացավ միանգամից երկու երկրում՝ Նորվեգիայում եւ հենց Մեծ Բրիտանիայում:

Հարց – Պարզաբանեք...

Պատ. – Խոսքը Բրեյվիկի (եւ, առնվազն, «կադրից դուրս մնացած» եւս երեք մարդկանց) իրականացրած նորվեգական զնդակոծության մասին է: Այս իրադարձությունների մի քանի վարկած եւ պատճառ նշվեցին: Ես ներկայացնում եմ մաքուր իմը, մի մարդու վարկած, որը պատկերացում ունի դինաստիական սխեմաների եւ զինանիշագիտության մասին եւ փորձում է դրանք կապել արդի մեռնող կապիտալիզմի քաղաքատնտեսության հետ:

Այն, որ Բրեյվիկը մենակ չէ, պարզ է: Իրադարձության թաքուն գաղտնագրերը հասկանալու համար հարկավոր է հարց տալ. ո՞վ է կառավարում Նորվեգիան: Սաքսեն-Կոբուրգների արքայատոհմը: Իսկ ո՞վ է կառավարում Մեծ Բրիտանիան: Ի՞նչ անսպասելի բան՝ նույնպես Սաքսեն-Կոբուրգները: Միայն թե նրանք Վինձոր են անվանվում. «ազգանունը» փոխել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (որքանով էր հարմար, որ Մեծ Բրիտանիան, որը կռվում էր գերմանացիների դեմ, կառավարեր գերմանական հնչողություն ունեցող արքայատոհմը):

Իսկ մյան ինչ-որ բան տեղի չունեցա՞վ արդյոք 2011թ. ամռանը Մեծ Բրիտանիայում: Այն էլ ինչպե՞ս տեղի ունեցավ. ջարդարարությունների ալիք, ըստ էության՝ գունավոր բնակչության փողոցային մարտեր, որը տարօրինակ կերպով համընկավ նորվեգական միջադեպի հետ: Թեեւ, իհարկե, չհասավ երկրորդի դաժանության մակարդակին: Նշեն, որ ես միակը չեմ, որ Մեծ Բրիտանիայի եւ Նորվեգիայի իրադարձությունները կապում է Սաքսեն-Կոբուրգների արքայատոհմի եւ համաշխարհային վերնախավում տիրող դինակայության հետ: Սա նկատել են մաքուր այլ վերլուծաբաններ: Նորվեգական զանգվածային սպանությունը, որի զոհ

դարձան ամենեւին էլ ոչ հասարակ ժողովրդի ներկայացուցիչ պատանիներ ու աղջիկներ, ինչպես եւ լուրջ հուզումներն անգլիական քաղաքներում, իմ կարծիքով, համաշխարհային վերնախավի մի մասի ուղերձն են (կամ վերջին նախազուշացումը, եթե կուզեք՝ «սեւ նշանը») մյուսին, որը նեոլիթերալ գծի առաջնորդն է: Ուղերձը շատ դաժան է: Դրա իմաստը պարզ է. «Կվերցնենք նաեւ երեխաներին»: Սա նշանակում է, որ համաշխարհային վերնախավի կոնֆլիկտը հասել է սրության այնպիսի աստիճանի, որ չեն խնայի անգամ երեխաներին. մինչ այս նման բան չէր եղել: Ազդանշանն ընդունված է: Ընդունված են թագավորական ընտանիքի անվտանգության աննախադեպ միջոցներ: Կհասցնի՞ արդյոք «կայսրությունը», ասել է թե՛ դինաստիան, պատասխան հարված: Դիանայի հետ կապված պատմությունը, եւ ընդհանրապես, Վինձորների ողջ պատմությունը ցույց է տալիս, որ այդ տղաները շատ բանի են ընդունակ: Տեսնենք:

Չարք – Եվ ի՞նչ ենք ստանում արդյունքում:

Պատ. – Երեք իրադարձություն, որոնք ինձ գլխավորն են թվում 2011թ.՝ «արաբական գարուն», եվրոգոտու ճգնաժամ եւ նորվեգական զնդակոծություն. մասշտաբներով տարբեր իրադարձություններ: Բայց դրանք մեկ հայտարար ունեն՝ 2008-ից հետո կտրուկ սրված պայքարը համաշխարհային վերնախավի ներսում՝ ապագայի համար: Այսպիսով, մենք ունենք տարբեր մակարդակի եւ մասշտաբի էլ ավելի սուր հակասությունների թնջուկ: Դրանք հակասություններ են.

- համաշխարհային վերնախավի զարգացման հակալիթերալ եւ նեոլիթերալ ռազմավարությունների եւ համապատասխանաբար՝ հակալիթերալ եւ նեոլիթերալ կլաստերների միջեւ,

- 1980–2000թթ. գլոբալիզացիայի միտումների եւ իրենց համար ճանապարհ հարթող ԿՏԿ-ների (որպես գլոբալ ճգնաժամի հաղթահարման ձեւի) միջեւ,

- պետբյուրոկրատիաների եւ ֆինանսական կապիտալի ու, համապատասխանաբար, ցանցային եւ օրդենյան կառույցների միջեւ, որոնք կանգնած են առաջինների եւ երկրորդների հետեւում,

- ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ,

- ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի «անդրկուլիսների» միջեւ (պայմանակա՝ նորեն՝ Օրդեն եւ Խումբ, քանի որ ռեալ իրավիճակն ավելի բարդ է),

- բուն ԱՄՆ իսթեբլիշմենթի ներսում՝ ինչպես մարտավարական (հերթական ընտրություններ), այնպես էլ ռազմավարական հարցերով:

Չարք – Եվ ի՞նչ է սպասվում այս համատեքստում Ռուսաստանին:

Պատ. – Բոլոր ճգնաժամերը, որոնց մասին խոսեցինք, անդրադառնում են ՌԴ-ի վրա: Ստացվում է ճգնաժամի «կրկնակի զանգված»: Մեզ համար 2011 թվականը նույնպես խիստ կարեւոր էր: Նախ՝ սրվեցին բոլոր հնարավոր հակասությունները. իշխանության եւ հասարակության միջեւ, իշխանության ներսում՝ վերին եւ ստորին սեգմենտների միջեւ, վերին սեգմենտի ներսում՝ տարբեր խմբերի միջեւ («ուժայիններ»-«քաղաքացիականներ»), իսկ խմբերի ներսում՝ կլանների միջեւ: Ընդ որում՝ հավանաբար բոլոր խմբերի իշխանական (վարչական) ռեսուրսները զրեթե սպառված են: Վերջին ընտրություններն ակնհայտ ցույց տվեցին դա: Նշված սպառվածությունն ուժեղանում է խորհրդային նյութական ժառանգության վատնման փաստով. «տասականների» կեսին այն ամբողջովին կմսվի-կվերջանա: Ավարտվում է իննսունականների եւ 2000թթ. սկզբի «ՆԷՊ-2»-ը: Արդյո՞ք այն կավարտվի այնպես, ինչպես «ՆԷՊ-1»-ը: Չգիտեմ:

svpressa.ru

15.01.2012

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՇՈՒՐՋ *Ֆեոդոր Լուկյանով*

Ֆեոդոր Լուկյանով – «Россия в глобальной политике» հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի արտաքին եւ պաշտպանական քաղաքականության խորհրդի անդամ:

Անկասկած, գալիք քաղաքական շրջանի գլխավոր թեմաներից է լինելու Եվրասիական միության գաղափարը, որն առաջադրվել է Վ.Պուտինի կողմից՝ ծրագրային հոդվածի տեսքով (2011թ. հոկտեմբեր), նախագահական պաշտոնին վերադառնալու ժամանակ: Սակայն այս ընթացքում բուն հասկացությունը, կարծես, խիստ լղոզվել է: Ավելի ճիշտ, նրա ընկալումը հիմնված է մի շարք թյուրըմբռնումների վրա, որոնք առաջացել են այն պատճառով, որ նախագծի հեղինակներն իրենք լիովին չեն ըմբռնում, թե դա ինչ է նշանակում:

Պետք է սկսել նրանից, որ անվանումը մոլորության մեջ է գցում: Եվրասիական գաղափարախոսության (*համաձայն որի՝ Ռուսաստանը ներկայացնում է առանձնահատուկ, եզակի քաղաքակրթություն, որը հակադրվում է Եվրոպային եւ ունի Եվրասիայի վիթխարի տարածությունները միավորելու առաքելություն*) հետեւորդներին պուտինյան գաղափարը չափազանց ոգեւորեց: Սակայն ո՛չ բուն հոդվածից, ո՛չ հաջորդող բացատրություններից (պետք է ասել՝ սակավաթիվ եւ ոչ կոնկրետ) Տրուբեցկոյի, Գոմիլյովի կամ Դուզինի ոգով ոչ մի Եվրասիական մետաֆիզիկա չի բխում:

Ավելի շուտ, խոսքը ոչ թե Եվրոպական մոտեցումների մերժման մասին է, ինչը բնական կլիներ իսկական Եվրասիացու համար, այլ դրանց փոխառնման եւ Ռուսաստանին ու շրջակայքին ադապտացման: Չասկացության օգտագործումն ունի երկակի իմաստ. մի կողմից՝ ընդգծել տարբերությունը ԵՄ-ից (այստեղից էլ Եվրասիականությունը), բայց, մյուս կողմից, ցուցադրել նմանությունը կազմակերպական սկզբունքներին:

Եթե քանդենք բանավոր սարդոստայնը, ապա հասկանալի կլինի, որ խոսքն, առաջին հերթին, կոնկրետ երկրի՝ Ուկրաինայի մասին է: Ուկրաինայի ներգրավումը ինտեգրման նախագծին՝ վերջինիս միանգամայն այլ ձեւաչափ կհաղորդի, որի հետ բոլորը ստիպված կլինեն հաշվի նստել:

Կենտրոնական Ասիան նախագծի հեղինակներին ավելի քիչ է հետաքրքրում: Դա զարմանալի չէ, քանզի, տնտեսական տեսանկյունից, առավել հավանական թեկնածուներն (Ղրղզստանը եւ Տաջիկստանը) ավելի շատ խնդիրներ կբերեն, քան դիվիդենդներ: Այնպես որ, եվրասիական բաղադրիչը գործունակ եւ հումքով հարուստ Ղազախստանով հավանաբար երկար ժամանակ կսահմանափակվի:

Բացի այդ, մշտապես մատնանշվում է, թե եվրասիական միությունը փակ կառույց չէ, այլ ապագա միասնական տարածության (Լիսաբոնից մինչեւ Պոլսան) տարր, ուր խանդավառությամբ կընդգրկվեն բոլոր շուկաները՝ եվրոպականից մինչեւ խաղաղօվկիանոսյան:

Եվրասիական միությունն՝ իբրեւ Մաքսային միության զարգացում, կիրառական նախաձեռնություն է: Նրա նպատակն է շուկաների ընդարձակումը եւ ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված՝ քանդված արտադրական շղթաների մի մասի վերականգնումը, իսկ միջոցը՝ այդ տարածքում 20-րդ դարի երկրորդ կեսի եվրոպական ինտեգրման սկզբունքների վերարտադրումը: Որպես կատալիզատոր է ծառայում խոր ճգնաժամը եվրոպական միությունում, որն այժմ եւ տեսանելի ապագայում ստիպված է լինելու զբաղվել բացառապես ներքին խնդիրներով եւ ոչ թե սահմանակից պետություններով:

Եվ այսպես, Ռուսաստանին մրցակցության մակարդակն իջեցնելու բարենպաստ հնարավորություն է ընձեռվում: Առավել եւս, որ գաղափարն ինքնին միանգամայն ռացիոնալ է եւ կարող է հեռանկարային լինել:

Այստեղ, սակայն, առկա է նախագծի պարզորոշ նկարագրի բացակայությունը: Երբ կա թաղանթ, սակայն բացակայում է հստակ պարունակությունը, թաղանթն սկսում է ինքնուրույն լցվել՝ ներծծելով այն, ինչը ճախրում է օդում: Իսկ մեզ մոտ օդում ճախրում է մնացորդային խորհրդամետ ճարտասանությունը՝ առատորեն համեմված «միասնականի» եւ «հզորի» նկատմամբ կարոտախտով. մեկի մոտ անկեղծորեն, մյուսի մոտ շինծու եւ ուռճացված՝ կախված իրավիճակից:

Եվրասիական միության նախաձեռնողների մոտ բացակայում է խոսքը, որը ժամանակակից տեսքով կներկայացներ այդ կառույցը՝ դեմքով դեպի ապագան:

Չամենատությունները եվրոպական ինտեգրման հետ, որոնք փոքր-ինչ ամոթխածորեն եւ խուսափողաբար են ներկայացված ծրագրային փաստաթղթերում, որպեսզի չստեղծվի պատճենման տպավորություն, կարող են լինել լրացում, սակայն անհրաժեշտ է առանցք: Եվ քանի որ ամբողջական պատկերը, լինի գործընկերների արժեքային ընդհանրություն, թե բոլորի կողմից կիսվող աշխարհաքաղաքական շահեր,

բացակայում է, փաստարկունը կրկին գլորվում է հիշողությունների գիրկը, թե առաջ որքան գեղեցիկ էր կյանքը:

Ընդհանուր խորհրդային անցյալի նկատմամբ քնքուշ զգացումը մնացած նախկին խորհրդային հանրապետություններում բոլորովին էլ այդքան դրական չի ընկալվում, որքան Ռուսաստանում: Նա ողբում է հզորության կորուստը, իսկ մնացածները տոնում են սեփական պետականության ծնունդը: Հասկանալի է, որ ցանկացած հետխորհրդային երկրում քիչ չեն նրանք, ովքեր 20 տարվա ընթացքում շատ բան են կորցրել եւ հաճույքով կվերադառնային «ոսկե դար»: Սակայն նման մարդիկ, սերունդների հասունացմանը զուգահեռ, որոնք այդ դարը չեն հիշում, պակասում են: Եվ անշուշտ, այդ երազները չեն ըմբռնվում նախկին խորհրդային հանրապետություններից եւ ոչ մեկի կառավարող խավի կողմից. նրանք, բնականաբար, շահագրգիռ չեն սեփական ապալեգիտմանց: Մինչդեռ, եվրասիական ինտեգրման առանձնահատկությունն այն է, որ այն ավելի մեծ չափով, քան եվրոպականը, կառուցվում է վերնախավերի պայմանավորվածությունների վրա: Այսինքն՝ ապագա գործընկերներին «կենտրոն–ծայրամաս» հարաբերությունների նախկին համակարգին վերադարձով վախեցնելն ամենեւին ձեռնտու չէ:

Ենթադրյալ եվրասիական միությունն այն չէ, ինչպիսին որ տեսնում են կողքից: Այն ո՛չ «մեծ տափաստանի» քաղաքական մարմնացումն է, ո՛չ էլ ԽՍՀՄ վերամարմնավորումը, այլ սոսկ փոքր այլընտրանք է եվրամիությանը:

Եթե նախագիծը շարունակվի (իսկ դրա առաջխաղացման համար քաղաքական կամքը շատ ուժեղ է), ապա, հնարավոր է, թաղանթը կլցվի որեւէ՝ առավել կոնկրետ պարունակությամբ, իսկ օգուտները, որ կարող են քաղել մասնակիցները, նրանց կմղի գաղափարական հենքի որոնման: Առայժմ եվրասիական միությունը ռուսական գիտակցության միջանկյալ վիճակի հերթական վառ օրինակ է, որն արդեն սկսում է բացահայտորեն հեռանալ նախկին կայսերական կաղապարից, բայց տակավին չի կարող եւ չի ուզում այն խոստովանել:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սեւակ Սարուխանյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	1
Արաքս Փաշայան ՍԻՐԻԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Արտաշես Տեր-Հարությունյան ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՐԱՆԸ	10
Հայկ Գաբրիելյան ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔ – ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	15
Բենիամին Պողոսյան ԱՄՆ-Ը ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ	20
Գագիկ Տեր-Հարությունյան ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	26
Անդրեյ Ֆուրսով ԳԱԼԻՍ Է ՆՈՐ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ	31
Ֆեոդոր Լուկյանով ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՇՈՒՐՋ	38

*Շապիկին պատկերված է
Շանչյանների տոհմական բերդը
(Գուգարք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: